Չուլթեամբ կը տարբերի այսպէս կոչուած նախաստղային կամ «մութ» նիւթը: Բնագէտներէն ոմանք կ'ենթադրեն թէ ատիկա կրնայ ձեւով մը մնացորդն ըլլալ տիեզերածին հնագոյն նախանիւթին: Ըստ անոնց, նիւթի մասնիկներու այդ տեսակը աստղագոյացման գործընթացին մէջ կարեւոր դեր ունեցած ըլլալու էր տիեզերածնութեան վաղ ժամանակներուն երբ շատ աւելի բարձր էին ջերմաստիճանները, ներուժերն ու խտութիւնները: Բայց հիմա, կը տեսաբանեն (theorize) անոնք, այս նիւթատեսակը պարզապէս կը կուտակուի ու կը խոնուի տիեզերական անջրպտին մէջ՝ առանց ներգործելու կամ փոխազդելու երկնային համարեա որեւէ մարմնի վրայ՝ բացի ձգողական դաշտի յառաջացման մէջ ունեցած իր գերակշիռ մասնակցութենէն: Իր ձգողական ուժի ներգործութեան շնորհիւ է որ փոխազդած կապերով իրենց ուղեծիրերուն վրայ կը շարունակեն հետեւողականորէն ընթանալ աստղերը, կաթնածիրերն ու կաթնածիրերու ամբողջ համակարգը: Բացի այս կարեւոր հանգամանքէն, տիեզերական մեզի ծանօթ շրջապատի մնացեալ բնագաւառներուն հետ ու յատկապէս լոյսի արտացոլման մէջ այնքան չափազանց թոյլ է իր փոխազդեցութիւնը, որ անուղղակիորէն ենթադրուած նման մութ նախանիւթի ներկայութիւնը դեռ կարելի չէ եղած տեսնել կամ հետեւեցնել մերօրեայ հզօրագոյն աստղադիտակներու ընձեռած միջոցներով: Այս ենթադրութեան շատ մօտիկ դիրքորոշմամբ հանդերձ, Վիկտոր Համբարձումեանի եւ Բիւրականեանի իր մեծատաղանդ գործընկերներու յայտնագործութիւններուն համախոհ միջազգային բազմաթիւ աստղագէտներ ներկայիս հակուած են այն նորագոյն վարկածին թէ՛ նախաստղային յիշեալ մութ նիւթը այսօր եւս գործօն կերպով կը մասնակցի աստղերու յառաջացման տիեզերածնական գործընթացին: Աստղագէտներու հաշուարկները կը թելադրեն թէ աստղագիտութեան մէջ մինչեւ այսօր ուսումնասիրուած բոլոր երեւոյթներէն արմատապէս տարբեր, տակաւին վերջնականորէն չհաստատուած եւ իր բնոյթով դեռ անծանօթ նախաստղային մութ նիւթի քանակութիւնը տիեզերքի մէջ աւելի քան տասն անգամով կը գերազանցէ տեսանելի սովորական նիւթը:

Որքան ալ արտասովոր կամ նոյնիսկ մտացածին թուի, տիեզերաբաններ ներկայիս կը խորհին թէ տարբեր տեսակի ուրիշ «մութ» բաղադրուցիչ մը տիեզերքի մէջ իր քանակութեամբ շատ աւելի գերակշիռ է քան նորայայտ «մութ» նիւթը: «Մութ ներուժ» (dark energy) կոչուած այս վերջին բաղադրուցիչը կը ներթափանցէ ամբողջ տիեզերական անհունութիւնը՝ յառաջացնելով հակա-ձգողական (anti-gravity) ուժ մը որ գլխաւոր պատճառը կը նկատուի տիեզերքի ընդարձակման ընթացքին մէջ նշմարտուող հետզհետէ աւելի եւ աւելի արագացման: Այս առնչութեամբ եւս Վիկտոր Համբարձումեանի գլխաւորած Բիւրականեան ուղղութիւնը լուրջ վերապահութիւններ ունի, թէ՛ նման վարկած չի կրնար հետեցուիլ գուտ տեսա-

կան ենթադրութիւններէ, այլ միաժամանակ անմիջականորէն խարսխուած ըլլալու է դիտումներու հայթայթած փաստերու վրայ: Հակառակ որոշակի վերապահութիւններուն, ներկայիս տարածուած հայեացքներու եւ վերջին հաշուարկներու լոյսին տակ, ամբողջ տիեզերքի համընդհանուր բաղադրութեան մէջ կը մտնեն՝ 4% սովորական տեսանելի նիւթ, 22% նախաստղային մութ նիւթ (dark matter) եւ 74% մութ ներուժ (dark energy):

2. ՏԻԵՁԵՐՔԻ ԱՌԵՆՈՒՄԸ

Ուրուագծուած 200 միլիառ աստղերու օճախ մեր կաթնածիրը՝ հայտնի Վահագն աստղային մեզի շուրջն էր ձգողական ուժի ճգնաժամային ճանապարհը միայն մէկն է՝ տիեզերական անհունը լիացնող նմանատիպ կաթնածիրերէն կամ տիեզերակղզիներէն (island universes): Աստղագէտներու մէկտեղած հարուստ դիտումներէն ու բազմապիսի հաշուարկներէն կարելի է ենթադրել թէ տարբեր ձեւի, չափի եւ աստղաբնակչութեան այսպիսի առնուազն 125 միլիառ կաթնածիրեր գոյութիւն ունին տիեզերական մեզի յայտնի տարածութեան մէջ: Մարդկային ամենագոր նկատուած երեւակայութիւնը բացարձակապէս անկարող է, նոյնիսկ ուրուագծումի ամենէն աղօտ մօտարկումով (approximation), գէթ մասնակիորէն մտապատկերելու նման չափային համեմատութիւնները տարածութեան ու ժամանակի մէջ:

Արդարեւ, Սկեյլու համար՝ ի՞նչ են տարածութիւնն ու ժամանակը: Անշատ գոյացումներ են: Անփոփոխ են: Թէ՛ իրար հետ սերտօրէն կապուած ու փոփոխական, ինչպէս Ալպերթ Այնշթայն կը պնդէ իր Յարաբերականութեան Ընդհանուր Տեսութեան մէջ:

Տիեզերքը սկիզբ ունեցած է, թէ՛ չաւերժական է բայց միշտ կը փոփոխուի եւ անվերջ կը փոխակերպուի: Եթէ սկիզբ ունեցած է, ապա ինչպէ՞ս, եւ ի՞նչ կար իրմէ առաջ – ո՞վ չէ լսած այն ջերմեռանդ հարցումները որով չորս-հինգ տարեկանէն սկսեալ երեխան կը շփոթեցնէ երէցները եւ որոնց գոհացուցիչ պատասխանը դեռ չստացած իր աչքերը կը փակէ խոր ծերութեան մէջ: Եթէ սկիզբ ունեցած է, այսինքն եթէ միշտ գոյութիւն ունեցած է, ապա բոլոր երկնային մարմիններու ջերմութեան ցրումէն եւ ներուժի սպառումէն ետք ինչպէ՞ս պիտի վերանորոգէ իր ուժականութիւնը եւ շարունակէ գոյութիւնը:

Կարեւորագոյն հարցումներէն մէկը՝ արդե՞ք կեանքը տիեզերական-բնական անհրաժեշտութեան մը բնածին արգասիքն է, թէ՛ կոչը պատահականութեան մը ընկերացող դիպուած: Այլ խօսքով, արդե՞ք կեանքը – եւ իր ծաղիկը եղող



Մեր Կաթնածիրի «Քարինա» Միգամածութիւնը՝ 50 լուսատարի լայնքով, որու մօտիկ աստղասփիւռին մէջ կարելի է նշմարել նորածին ու մահամերձ աստղերու յարձակումը:

բնականութեան, մտածումի, զգացողութեան, երեւակայութեան, եւ իմացական-յուզական հոգեմտաւոր կենսայորդ ամբողջ հրաշալիքը – ամենուր կը ծնի ու կը փթթի որպէս տիեզերքի ներքին բնոյթին եւ էութեան բնական օրինաչափութիւնն ու անխուսափելի արտայայտութիւնը: Թէ՛ կեանքն իր յիշեալ աստղային երեւոյթ մըն է որ, բնութեան կարգ մը պայմաններու պատահական մէկտեղման պարագային, կարճ պահ մը պատահաբար կը յայտնուի տիեզերքի կարգ մը վայրերուն մէջ:

Ու գերագոյն հարցում մը՝ ինչո՞ւ գոյացած են այսքան անհա-

մար եւ այլազան երկնային մարմինները: Ըստ աստղագէտներու մէկ հետաքրքրական նախահաշուարկին, Երկիր մոլորակի մօտ մէկ միլիոն քիլոմետր ընդհանուր երկարութեամբ բոլոր ծովեզերքներուն ու լճակներուն փուռած աւազանատիկներու թիւէն շատ աւելի մեծ է մեզի ծանօթ տիեզերքի աստղերուն թիւը: Ի տես նման թուաքանակի, ամենէն առարկայական ու փորձապաշտ գիտնականն իսկ ուշ կամ կանուխ հարց պիտի տայ թէ ինչո՞ւ համար կրնայ ըլլալ այսքան բազմաթիւ – չըսելու համար անթիւ – աստղերու գոյութիւնը: Ճիշդ է թէ գիտնականին բնորոշ հարցումը «ինչպէ՞ս» է, եւ թէ իմաստասէր-փիլիսոփայի բնագաւառին մէջ կ'իյնայ կաշուն «ինչո՞ւ» հարցումը: Տիեզերքի աստղաշատ անհունութեան մէջ տեղ մը, սակայն, այս երկուքը անպայման կը հանդիպին իրարու: Երկուքէն որեւէ մէկը չի կրնար անտեսել միւսին հարցումը – նոյնիսկ եթէ անհանգիստ զգայ՝ պատասխանի չգոյութեան համար:

Ասոնք հարցումներու երկար շարանին առաջին գիծը կը գրաւեն միայն: Դեռ պիտի չխօսիմ՝ կեանքի կենդանական, բուսական, բիւրեղակերպ, հոսանուտ, կազատիպ եւ այլ տարատեսակներու կարելիութեան մասին: Պիտի չքրքրեմ՝ հակաբնական աստիճանաչափով աստղերու եւ կաթնածիրերու, միաժամանակ խուսափողական խաբուսիկ ելեկտրոններու եւ փոքրագոյն ենթամասնիկներու ներփակած կենսաթրթիւն անհունութեան խորհուրդը: Պիտի չարձարծեմ՝ օրկանապէս իրերահաշտ եւ իմացականորէն իրերահաղորդ հաւաքական կեանքերու համատեղելիութեան վարկածը: Պիտի չքննարկեմ՝ յայտնի եւ անյայտ այլազան կենսա-

Շարք էջ 10

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ՝ ՄՏԱՅՆԱՓՈԽՈՒԹԵԱՄԲ

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

«Կը մտածեմ, ուրեմն կամ» (գոյուլթիւն ունիմ), արտայայտութեան հեղինակը Տեքարթն է: Հետեւաբար, երբ մարդ արարածի գոյութեան երաշխիքը իր մտածելու կարողութիւնն է, ուրեմն իր ապրած կեանքն այլ այդ մտածումներուն մարմնացումը պէտք է ըլլայ: Որովհետեւ կարելի է հար մտածումներով բարի կեանք մը վարել եւ կամ՝ հակառակը: Հոսկէ մեկնած, կարելի է հաստատել, որ եթէ կ'ուզենք փոխել մեր ապրելակերպը, նախապայման է փոխել մեր մտածելակերպը: Ասիկա կարելի կը դառնայ շնորհիւ այն կրթութեան, որ անհատը կը ստանայ ոչ միայն ուսանողական տարիներուն, այլ նաեւ իր ամբողջ կեանքի ընթացքին: Որովհետեւ կեանքը յարատեւ բարելւման ու արժեքաւորման առաքելութիւն մը պէտք է ըլլայ ամէն մէկուն համար: Ուրեմն մեծ է այն դերն ու պատասխանատուութիւնը որ դրուած է ազգի մտաւորականութեան ուսերուն, կարենալ յաջողցնելու այս առաքելութիւնը: Մտաւորականութիւն՝ որ երջանկայիշատակ Սիւլվա Կապուտիկեանի բնութագրումով, կը սեռի «միտք» արմատ բառէն եւ ոչ թէ «մոտք»: Մտաւորականութիւն, որ գիտակից է իր դերին ու կոչումին՝

1) Զգտելու բարիին, վսեմին ու ճշմարիտին, եւ զայն հասարակութեան սեփականութիւնը դարձնելու պարտականութեան:

2) Բարելուելու ժողովուրդի մտածելակերպը եւ գոյացնելու իր իրաւունքներուն գիտակից քաղաքացիական արժուն հասարակութիւն:

3) Ժողովուրդի ուժաւորումով նպաստելու երկրի ու պետականութեան հզօրացման:

2009 տարուան շեմին, երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք անցնող տարուան վրայ, կը տեսնենք, խորենացիի բնութագրումով՝ «Երկար ճանապարհները հեշտացնող յոյսը» ու կը յուսադրուինք, որ անցած տասնամեակի մեր գահավէժ ընթացքը վերջապէս հասած է այն կէտին, ուրկէ կը սկսի վերելքի յուսատու ճամբան: Բոլորիս համար պարզ պէտք է ըլլայ, որ տասնամեակէ մը ի վեր, դարձեալ խորենացիի բնութագրումներով, «հաւատը ծախուում էր այս ունայն կեանքի համար: Ինչո՞ւ: «Որովհետեւ մեզի տիրեցին խստասիրտ ու չար թագաւորներ» որոնք իրենց գոռոզ, մեծամիտ ու «տղամարդավարի» վարքով, փորձեցին կաշկանդել մեր մտքերը, խեղճացնել ազատամիտները ու «չար օրինակ դարձնել զանոնք ծաղրելն ու արհամարհելը»: Ինչո՞ւ: Որովհետեւ ունեցանք «ազահ ու գողերին գողակից իշխաններ», «անարի ու գինեմոլ գինուորականներ», «կաշառակեռ ու իրաւունքը չպաշտպանող դատաւորներ», «ցուցամոլ ու կեղծաւոր կրօնաւորներ», «ոսկեսէր ու հեղութիւնը թողած ուսուցիչներ»...

Արդարցիտէն հարց տուողներ պիտի ըլլան, թէ ի՞նչն է որ մեզ կը յուսադրէ, երբ վերեւ նշուած տիւրը իրավիճակը տակաւին կը

մնայ ի գօրու, մանաւանդ երբ մեր աչքին առջեւ տակաւին թարմ է Մարտ 1ի ողբերգութիւնը: Մեր կարճ պատասխանն է՝ ժողովուրդի հոգեփոխութիւնն ու մտայնափոխութիւնը, պայմանաւորուած առաջնորդի յայտնումով: Եթէ 1999 Հոկտեմբեր 27ի Ազգային ժողովի սպանդը մեր վայրէջքը յատկանշող բեկումնային կէտն էր, ապա 2008 Մարտ 1ի ժողովուրդի սպանդը մեր սպասուած վերելքը ազդարարող արծարծման կէտն է: Հոկտեմբեր 27ի ահաւորութեան տակ շրջած ժողովուրդի ուղեկորը վիճակը Մարտ 1ով սթափեցաւ ու անցաւ այդ վիճակէն դուրս գալու ուղիներու փնտրութիւն անհրաժեշտ քայլերուն: Մտային կաշկանդման հաշտոյն գէթ նիւթական նպաստաւոր պայմաններ ակնկալող ժողովուրդը հասաւ այն եզրակացութեան, որ «մարդ միայն հացով չպարիւր», որ արժանապատիւ կեանքը գերադաս է անասնական կեանքէն: Եթէ չըլլար այդ մտայնափոխութիւնը, պիտի չունենայինք Փետրուար 19էն մինչեւ Մարտ 1 երկարող ժողովուրդային բազմահարմանց ցոյցերը, այլ՝ իշխանութեան կերակրատաշտին հացող հլու-հնազանդ ստրուկներ: Այս պատճառաւ, հակառակ իր ամբողջ ահաւորութեան, Մարտ 1ը պէտք է դիտել ոչ թէ ժխտական պարունակի, այլ այս վիճակէն դուրս գալու ժողովուրդի վճռակամութեան լոյսին տակ: Այս իրականութիւնն է, որ մեզ կը յուսադրէ:

Մարդ կայ, որ ճակատագրապաշտ է ու կը յանձնուի ճակատագրի քմայքին: Մարդ ալ կայ, որ կը հաւատայ թէ իր իմացական ուժով կարող է կերտել ա՛յն ճակատագիրը, որուն ինքզինք արժանի կը գտնէ: Մարտ 1ը այդպիսի մտայնութեան տէր մարդոց վճռական դիրքորոշման պահն էր, կասեցնելու անցնող տասնամեակի գաղափարական շիջումը: Մարտ 1ը այդ մտայնափոխութեան պատգամն էր, որ մենք մեր ձեռքով պիտի կերտենք մեր ապագան, վստահելով նախ եւ առաջ մեր սեպհական ուժին ու մեր արեան կանչին: Պիտի չի՛ հանդուրժենք որ որեւէ ուժ, ներքին թէ արտաքին, կաշկանդէ ու կաղապարէ մեր մտքերն ու մտածողութիւնը: Մտքեր կաշկանդող չի՛ կրնար հայրենասէր ըլլալ ու հետեւաբար չի՛ կրնար ազգը առաջնորդել արժանապատիւ ապագայի ուղիով: Համոզուած ըլլալով, որ մեզ նման փոքր ժողովուրդներու հաստատ ու արժանապատիւ ապագայի գլխաւոր երաշխիքը կը կայանայ նոյնինքն ժողովուրդի ուժաւորման եւ ժողովրդավար արդար ու օրէնքի գերակայութեան հիմունքներով առաջնորդող հասարակարգի մը ստեղծման մէջ, բոլորիս պարտականութիւնը պէտք է ըլլայ պայքարել յանուն այդ նպատակի իրագործման: Պէտք է թիկունք կանգնինք այդ հաւատով ոտքի ելածներու պայքարին ու անոնց գաղափարի տարածման: Որովհետեւ «անոնք կարող են յաղթել, որոնք կը հաւատան թէ կրնան»:

ԿԵՍԺԱՄԵԱՅ ՇՐՋԱՊՏՈՅՏ ՏԻԵՁԵՐՔԻ ՄԵՐՁԱԿԱՅ ՎԱՅՐԵՐԸ

Շարունակուած էջ 9-էն

տեսակներու հոգեմտաւոր թաքուն, անտեսուած ձիրքերու եւ կարողութիւններու մշակման ու ծաղկման իրական հնարաւորութիւնները: Պիտի չհարցադրեմ՝ այն նախադրեալները որոնք կրնան կարեւոր դեր խաղալ կեանքի երկարակեցութեան յաւելումին եւ, ինչո՞ւ է, յարաբերական անմահութեան ուղիին վրայ:

Մարդկային միտքը մագնիսացնող հեռաձիգ հարցումներուն վերջ չկայ: Երեւակայութեան արտաքին ու ներքին անջրպետները սահման չեն ճանչնար: Եւ որքան ալ զարմանալի կամ անտեղի թուի, գիտաշխատողներուն ու մանաւանդ աստղագէտներուն (astronomers), աստղաբանագէտներուն (astrophysicists), տիեզերագէտներուն (cosmologists) եւ տիեզերածնաբաններուն (cosmognists) մօտ տակաւ տեղ կը գտնէ ու կ'արմատաւորուի այն միտքը թէ՛՝ այս կարգի խորնջգրկուն հարցումներուն պատասխանները պէտք է փնտրել անջրպետի հեռագոյն խորերը: Կրնանք անսպասելի անակնկալներու հանդիպիլ այնտեղ: Որքան խորը դիտենք տիեզերական տարածութեան մէջ, մենք նաեւ այնքան աւելի յետադարձ ակնարկ մը նետած կ'ըլլանք ժամանակի անցեալին ուղղութեամբ՝ ե՛տ դէպի տիեզերքի սկզբնական պայմաններն ու պատահարները – եթէ, անշուշտ, այդպիսի սկիզբ մը եղած է: Ասոր համոզուելու համար կը բաւէ չմոռնալ թէ երբ կը դիտենք աստղերն ու կաթնածինները իրենց տարածական ահռելի հեռաւորութեամբ, մենք կը տեսնենք անոնց անցեալը ժամանակի մէջ, բանի որ տասնեակ, հազարաւոր, միլիոնաւոր կամ միլիարտաւոր տարիներ առաջ այդ հեռաւոր երկնային մարմիններէն առաքուած

լոյսն է որ մեզի կը հասնի հիմա: Երկրային հեռաւորութիւններու աստիճանաչափով, լոյսը այնքան արագ կը ճամբորդէ որ գործնապէս կրնանք գէրօ սեպել անցած ժամանակը: Այսպէս, եթէ գոյութիւն ունենար լոյսի արագութեամբ սուրացող օդանաւ մը, մէկ երկվայրկեանի կամ ակնթարթի մը մէջ պիտի կարենայինք եօթնուկէս անգամ երկրի շրջանն ընել: Առօրեայ մեր տեսածները առհասարակ այնքան մօտ են որ լոյսի արագութիւնը բոլորովին կը դադրի նկատուելի գործօն ըլլալէ:

Հարցը հիմնովին կը փոխուի անջրպետի անհունութեան մէջ: Տիեզերական հեռաւորութիւնները այնքան վիթխարի են որ զանոնք անցնելու համար լոյսը կրնայ ճամբորդել միլիոններով կամ միլիարտներով տարիներ: Այլ խօսքով, երբ աստղադիտակի ռադիոակնի կամ հայելիին հասնի լոյսը, աստղագէտին տեսածը տուեալ երկնային մարմինն է այնպէս ինչպէս կ'երեւար երբ ճամբայ ելաւ իր առաքած լոյսը, եւ ոչ այնպէս ինչպէս կ'երեւայ հիմա մեր ժամանակին մէջ: Երբ կը նայինք տիեզերական տարածութեան մէջ առկայ ծող աստղերուն ու կաթնածիրերուն, նոյն երկինքի հեռապատուին վրայ մենք տիեզերապատմական հանդիսատեսները կ'ըլլանք անցեալի անհամար տարբեր ժամանակներուն: Անոնցմէ շատեր հիմա, այս պահուն կրնան տեսնուածէն շատ տարբեր ըլլալ – պայթած, բռնկած, շիջած, խոշոր այլ փոփոխութիւններու ենթարկուած: Ուղղակի առնչութիւններ ու փոխադարձ կապեր ունինք ոչ միայն տիեզերքի համայնապարփակ անհունութեան, այլ նաեւ աստղադիտակի կիզակէտը լուսաւորող անցած ժամանակի իրական յաւերժութեան հետ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆՂ



**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ
ՀՐԱՆԴ ԵՒ ԶԱՊԵԼ ՍԱՖԱՐԵԱՆ**

ՄԵՐ ԲՈՒՆՈՐ ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԿԸ ՄԱՂԹԵՆՔ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



VREJ PASTRY

PASADENA
626-797-2331

GRANADA HILLS
818-366-2526

GLENDORA
626-914-1940

ԳԻՏԱԺՈՂՈՎ

**«1946-1948» ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱ ԴԱՍԵՐԸ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՅՍՕՐ**

Կարպիս Լեփեճեան

Յարգելի գիտաժողովի մասնակիցներ,

Այս փառաբանական եւ գիտական ներկայութեան մէջ իմ խօսքս պիտի հնչէ ոչ գիտական, պարզ այն պատճառով որ ներգաղթի եւ անոր առթած թեր ու դէմ վէճերը ես կ'ուզեմ ընկալելի դարձնել բարոյա-հոգեբանական առումով, յատկապէս այն ժամանակի ու միջոցառումի պայմաններուն մէջ զորս կը տիրէր հայրենադարձութենէն առաջ եւ յետոյ:

Մերձաւոր Արեւելք, հայրենադարձութիւն, նպատակ եւ հետեւանք:

Մեր խօսքը կեդրոնացուցած ենք արաբական երկիրներէն յատկապէս Սուրիահայ գաղութէն ներս մինչ ներգաղթի ու յետ ներգաղթի հետեւանքներուն ու անդրադարձներուն:

Կիլիկիոյ երկրորդ գաղթէն յետոյ ինչպէս ծանօթ է բոլորիս, հայ գաղթականները հաստատուեցան սահմանամերձ արաբական երկիրներ, Սուրիա, Լիբանան, Յորդանան, Պաղեստին եւ Եգիպտոս: Անոնք իրենց աշխատասիրութեամբ, արագորէն սկսան յարմարուիլ տեղական պայմաններուն: Հիմնականօրէն ըլլալով հմուտ արհեստաւորներ, անոնք իրենց հանապազօրեայ հացը վաստակելու սկսան արդար աշխատանքով եւ իրենց բարեկից ընտանիքներու սէրն ու համակրանքը:

Բնականաբար այս արագ յարմարուելուն նպաստեց նաեւ այն որ տուեալ երկիրը ֆրանսական գաղութարարներու հովանաւորութեան տակ էր, եւ գաղութարարները մեծապէս կ'օգտուէին հայ վարպետներու ծառայութիւններէն: Ասոր հետ մէկտեղ, կիսն ու երիտասարդ աղջիկը անմասն չէին մնար իրենց ամուսիններէն ու եղբայրներէն, բազմանդամ ընտանիքներուն: Այս հիւրընկալ երկիրն մէջ, անոնք շուտով հրաժարուելով թիթեղաշէն ու փայտաշէն կացարաններէն պետութեան, Բարոգործական Ընդհանուր Միութեան եւ այլ անհատ բարերարներու յատկացուցած հողերուն վրայ սկսան կառուցել նոր թաղամասեր, արուարձաններ իրենց եկեղեցի-մատուռներով, դպրոցներով եւ ակումբներով: Այստեղ պէտք է նշեմ, որ հայերը միմիայն արհեստաւորներ չէին, այլեւ կային բժիշկներ, դեղագործներ եւ արուեստի գործիչներ, որոնց նպաստը մեծ էր սուրիահայ գաղութի զարգացման մէջ: Օրինակ, այն թատերախումբը զորս ես կը ղեկավարեմ արդէն 25 տարիէ ի վեր հիմնուած է Հնչակեան Կուսակցութեան կողմէ 1919-1924էն սկսեալ մէկէ աւելի թատերախումբեր կը գործէին թէ կուսակցական, թէ դպրոցական կամ հայրենակցական միութիւններու հովանաւորութեամբ:

Ազատուելու համար իր փոքր դաշնակից հայերուն նկատմամբ ստանձնած բարոյական պարտաւորութիւններէն միջազգային հանրութիւնը, ֆրանսական գաղութարարներու ճնշման տակ ստիպել որ գաղթական հայերը ընդունէին տեղական քաղաքացիութիւնը: Սա եղաւ արեւմուտքի նենգ ու դաւադիր քաղաքականութեան վերջին հարուածը: Այսպիսով վերջ կը դրուէր դէպի երկիր վերադառնալու յոյսերուն: Այս եղելութիւնը կարծես նուէր մը կ'ըլլար Քեմալական Թուրքիային գալն ազատելով աւելորդ գլխացաւէ մը:

Հայերու նոր կարգավիճակը աւելի ցայտուն դարձաւ երբ ֆրանսացիները թուրքերուն յանձնեցին Սուրիական «Արեւմտեան սահմանափակում» 1936-1937 թուականներուն, ուր իրենց հազարամեայ գիւղերուն մէջ կ'ապրէին Մուսա-Լեռացիները, Քեսապցիները եւ Ամանուսցիները: Յետագային հայերու եւ արաբներու ճնշման տակ է որ Քեսապը սահմանէն այս կողմ մնաց: Այս իրադարձութիւններուն ամփոփումը յստակ արձանագրեցի մատնանշելու այն հոգեկան ծանր ապրումները, զորս կը կրէին 15ի Չարդբուրու յետնորդ, «մանկութիւն չունեցած» հայրերը: Սակայն անոնք հակառակ այս դժբանքի վերադառնալու որ հոգեկան տուժածներուն, իրենց հոգիին մէջ դեռ կը փայփայէին վերադարձի երազանքը: Ու թէեւ Չանսիրաբար կը կառուցէին սակայն միշտ կը հաւատային որ անոնք ժամանակաւոր կառուցներ էին: Այդպէս կը թելադրէր անոնց սիրտը...

Եւ եղաւ 1940 թուականի Բ. աշխարհամարտը: Հայ երիտասարդներ գինուորագրուեցան արտերկրի ֆրանսական բանակներուն ընդդէմ ֆաշիստական Գերմանիոյ: Անոնք գիտակցաբար գացին ռազմի դաշտ (Լիպիական անապատներ) հաւատալով թէ ֆաշիստներու ՉախՉախման մէջն էր իրենց փոքր հայրենիքի՝ Հայաստանի փրկութիւնը: Չէ՞ որ հաստատ համոզուած էին անոք որ Գերմանիոյ աւանդական դաշնակից թուրքը, ամենապատեհ առիթը օգտագործելով կրնար ներխուժել Հայաստան: Այս թեզի պաշտպանութեամբ հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ.ը որ իր ողջ ներուժը տրամադրեց այս գործին, ու իր աշխարհասփիւռ շրջաններուն կոչ ըրաւ, որպէսզի հանգանակութիւններով օժանդակեն չարստեցնի Դաւիթ» դանկային շարասիւնի կազմակերպման: Այդ օրհասական օրերուն սփիւռքահայ օրը

Սոյն թեմայով «Միջազգային Գիտաժողով»-ը տեղի ունեցաւ Երեւան-Օաղկաձորի մէջ 12-14 Դեկտեմբեր 2008 թուականին:

Այն կազմակերպուած էր ՀՀ Սփիւռքի նախարարութեան, ՀՀ Գիտութիւն-Գեղարվեստի Ազգային Ակադեմիային, Երեւանի Պետական Համալսարանին եւ «Նորավանդ» Գիտակրթական Հիմնադրամին կողմէ:

Այնտեղ ելոյթ ունեցաւ նաեւ ՍԴՀԿ-ի կողմէ Սուրիահայ Մշակութային եւ Ազգային գործիչ, բեմադրիչ Կարպիս Լեփեճեանը:

Ստորեւ կը ներկայացնենք այդ շահեկան գեկուցումը, որուն միւսը էր «Հայրենադարձութիւնը եւ ՍԴՀԿ-ի դերակատարութիւնը»



լու յոյսերուն: Այս եղելութիւնը կարծես նուէր մը կ'ըլլար Քեմալական Թուրքիային գալն ազատելով աւելորդ գլխացաւէ մը:

Հայերու նոր կարգավիճակը աւելի ցայտուն դարձաւ երբ ֆրանսացիները թուրքերուն յանձնեցին Սուրիական «Արեւմտեան սահմանափակում» 1936-1937 թուականներուն, ուր իրենց հազարամեայ գիւղերուն մէջ կ'ապրէին Մուսա-Լեռացիները, Քեսապցիները եւ Ամանուսցիները: Յետագային հայերու եւ արաբներու ճնշման տակ է որ Քեսապը սահմանէն այս կողմ մնաց: Այս իրադարձութիւններուն ամփոփումը յստակ արձանագրեցի մատնանշելու այն հոգեկան ծանր ապրումները, զորս կը կրէին 15ի Չարդբուրու յետնորդ, «մանկութիւն չունեցած» հայրերը: Սակայն անոնք հակառակ այս դժբանքի վերադառնալու որ հոգեկան տուժածներուն, իրենց հոգիին մէջ դեռ կը փայփայէին վերադարձի երազանքը: Ու թէեւ Չանսիրաբար կը կառուցէին սակայն միշտ կը հաւատային որ անոնք ժամանակաւոր կառուցներ էին: Այդպէս կը թելադրէր անոնց սիրտը...

Եւ եղաւ 1940 թուականի Բ. աշխարհամարտը: Հայ երիտասարդներ գինուորագրուեցան արտերկրի ֆրանսական բանակներուն ընդդէմ ֆաշիստական Գերմանիոյ: Անոնք գիտակցաբար գացին ռազմի դաշտ (Լիպիական անապատներ) հաւատալով թէ ֆաշիստներու ՉախՉախման մէջն էր իրենց փոքր հայրենիքի՝ Հայաստանի փրկութիւնը: Չէ՞ որ հաստատ համոզուած էին անոք որ Գերմանիոյ աւանդական դաշնակից թուրքը, ամենապատեհ առիթը օգտագործելով կրնար ներխուժել Հայաստան: Այս թեզի պաշտպանութեամբ հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ.ը որ իր ողջ ներուժը տրամադրեց այս գործին, ու իր աշխարհասփիւռ շրջաններուն կոչ ըրաւ, որպէսզի հանգանակութիւններով օժանդակեն չարստեցնի Դաւիթ» դանկային շարասիւնի կազմակերպման: Այդ օրհասական օրերուն սփիւռքահայ օրը

օրին, ժամը ժամին կը հետեւէր յատկապէս Սովետական ճակատի իրադարձութիւններուն, ինչն ունէր իր արդարացի մեկնաբանութիւնը, քանի որ այդ ճակատի երկայնքով իրենց կեանքը կը գոհէին Հայաստանցի իրենց եղբայրները: Եւ երբ ֆաշիստական Գերմանիան ՉախՉախուցեց լուրեր հասան թէ ուր որ է Սովետական բանակը պիտի ներխուժէ Թուրքիա, պատմական Հայաստան: Սակայն բոլոր սպասումները ի դերեւելան, Թուրքիան կրցած էր սիրա-

շահիլ արեւմտեան դաշնակիցներու սիրտը... Այնուամենայնիւ Երկրորդ աշխարհամարտը շահած Սովետ Միութեան վարկանիշը կտրում բարձրացաւ սփիւռքի մէջ, քանզի փրկուած էր մեր փոքրիկ հայրենիքը: Սա հոգեբանական նոր լիցք կը հաղորդէր շատերուն, նոր խանդավառութիւն յուսադրող ու շէնշող: Ոգեւորութիւնը այնքան տարողունակ էր, որ մարդիկ նոյնիսկ ղեկավարներ, չէին երեւակայեր որ պատերազմող Հայաստանը իր ողջ մարդկային ներուժը տրամադրած էր պատերազմին եւ երկիրը տնտեսապէս քայքայուած էր: Հնչակեանները հաւատարիմ իրենց սկզբունքներուն, բնականաբար պիտի ըլլային Հայաստանի հետ, ու երբ 46-47ին հայրենիքն իր գիրկը կանչեց գաւակներուն կուսակցութիւնը ոչ միայն կազմակերպչական օգնութեամբ բաւարարուեցաւ, այլեւ իր ողջ կուսակցական ու համակրական շարքերը ուղղորդեց դէպի երկիր: Միայն մէկ փաստ արձանագրեմ, Քեսապի շրջանին 4 գիւղ հակառակ իրենց հազարամեայ գոյութեանը հոն, անապով կուսակցութեան կոչին ներգաղթի ճամբան բռնեցին: Անոնք են Պաշչուրտ, Մովի Թաղ, Գարատուրան եւ Սեւաղբիւր: Այդ օրերուն համատարած հաւատացած էին, թէ մէկ հայ իսկ դուրսը պիտի չմնայ: Գոնէ այդ սպաւորութիւնը ձգած էր Սովետական քարոզչութիւնը: Բայց յուսախաբուցութիւնը շատ արագ յուսալքեց այն բոլորին, ովքեր հերթագրուած էին ու կը սպասէին երթալու: Այնուհետեւ, անհասկնալի նամակներ սկսան գալ, կցկցտուր բառերով եւ հայատառ արաբերէն իմաստով: Բայց չէին

Շաք.բ էջ 13

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՊԵՏՐՈՍ
ՄԱՐՈՆԵԱՆ**

ԳԻՏԱԺՈՂՈՎ

«1946-1948» ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՐԱ ԴԱՍԵՐԸ

Շարունակում էք 12-էն

հաւատար, կարծելով թէ զրպարտութիւններ են անոնք: Իսկ երբ քանի մը հոգիներ փախուստ տալով հալչպ հասան այդ մարդոց դաւաճան նկատեցին... Այո, ինչպէս նշեցի Սովետական քարոզչութիւնը այնքան հզոր էր, որ նոյնիսկ կենդանի վկաներուն չէին հաւատար: Ներգաղթներուն ոսկէ երազը Սովետական իրականութեանը փախուելով, մղձաւանի վերածուեցաւ, իսկ իրենց սփիւռքի մէջ ձգած տնակները պալատներ թուեցան: Ներգաղթի ձգած թեր ու դէմ արձագանգը այնքան ազդած էր մնացողներուն վրայ որ նոյնիսկ ներգաղթէն քանի մը տարի յետոյ աշխարհ եկածներուն մէջ ալ սողոսկեցաւ այդ վէճը: Բայց եւ այնպէս, որքան ալ բացասական երանգներ տրուին, որքան ալ արմատապէս սովետացած հոգիներէն թոյն ժայթքած է ախպար որակաւորումով անմեղ ու շփոթահար ներգաղթողներուն հասցէին այդ բոլորէն վերն ու էականը հայրենիքին միաձուլուելն էր, միասին շէնացնելն էր հողը հայրենի: Ահա այս մտասեւեռման մէջ Հնչակեան կուսակցութիւնը չէր սխալած նոյնիսկ իր շարքերուն նստրացման գնով:

Այս բոլոր վերիվայրումներուն պատճառով երբ 64 թուականին սահմանափակ ներգաղթ մը եղաւ, ոգեւորութիւնը արդէն մարած էր, թէեւ երբ 60-ականի սկիզբը Թ. Ալթունեանի երգի-պարի անսամպլը Հալչպ այցելեց դիմաւորողներուն շարասիւնը հասած էր Հալչպի մուտքէն մինչեւ 10 քմ. ինչպէս Ասել գիւղը: Զարմանալիօրէն այդ ինչ խանդավառ ալիք մըն էր, որուն նմանը խօսքով կարելի չէ նկարագրել, կարծէք թէ շատոնց գիրար կորսնցուցած հարազատներ գտած էին իրարի, ոգնէ եւ այդ ողջագուրումներուն ականատեսը եղած եմ: Ահա այսպիսին էր շնորհալից հայրողիներուն վերաբերմունքը իրենց Հայաստանցի եղբայրներուն եւ քոյրերուն հանդէպ: Վստահ կրնամ ըսել որ այդ ողջագուրումներուն, լացերուն, յուզումներուն թարգմանը հայրենաբաղձութիւնն էր: Բնականաբար 65 թուականին ոգեւորութեան պակասը կարելի չէ միայն ներքին դժգոհութիւններու արձագանգներուն վերագրել, քանզի կար նաեւ տեղական կեանքի ու կենսամակարդակի բարելաման գործօնը, լեզուին տիրապետելու եւ համալսարաններ յանձնախուզ գործօնը, մէկ խօսքով տեղական բարքերուն, սովորութիւններուն եւ մշակոյթին հետ մերձենալու գործօնը: Բայց ասոր աւերթեր սկսած էր անդր-ովկիա-



նոսեան գաղթը: Ամերիկաներ, Աւստրալիա, եւայլն: Այն թաղամասերն ու արուարձանները որոնք հայու քրտինքով շողածուած էն արագօրէն սկսան պարպուիլ: Գացողները առանց ետ նայելու, 30-35 տարի հիւրանոցի մէջ ապրողի հոգեբանութեամբ գաղթեցին... Երբ մենք այդ արուարձաններէն մէկուն մէջ գտնուող Վարդանեան վարժարանի 35 ամեակը նշեցինք այդ թաղամասը արդէն հայաթափուած էր: Եւ այսօր երբ չկան հայահոծ գաղթօճախները արաբական երկիրներուն մէջ, մնացածներն ալ թէեւ կենաց-մահու պայքար կը մղեն ուժացման դէմ սակայն կաթիլ առ կաթիլ, շիթ առ շիթ արիւնաբամ կ'ըլլանք: Այս նահանգը աւելի զգացուեցաւ երբ Լիբանանի քաղաքացիական պատերազմը 16-17 տարի տեւեց ընդ-միջումներով: Եթէ առաջ Սուրիահայր քիչ մը մտահոգուէր շունչը Լիբանան կ'առնէր, ուր կար 250 հազար հայ, իսկ այսօր այդ թիւը դժբախտաբար պատմութեան անցած է: Ուրեմն ի՞նչ հետեւցնենք, կրնա՞նք ըսել թէ այսօր արդէն չկան այդ երկիրներուն մէջ հայրենաբաղձներ: Ո՛չ, չենք կրնար ըսել, քանի որ տակաւին կան հայեր, որոնք կը նախընտրեն ապրիլ հայրենիքին մէջ: Անոնց թիւը այնքան ալ արհամարհելի չէ բնաւ: Մանաւանդ որ անոնք կ'ուզեն ապրիլ ազատ-անկախ եւ ժողովրդավար Հայաստանի մէջ, սակայն անոնք մտավախութիւն մը ունին, կասկած մը որ մի գուցէ անվստահութիւնն է, մի գուցէ 46-էն ի վեր չսպիւրացած վէճը մըն է, մի գուցէ այսօրուայ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի անհարթութիւնն է, կամ սոցիալական բեւեռացումն է, ուր աչք կը թակեն հովանաւորեալ վերջէն հարստացածներու ճիւղերու շարասիւններ,

իրենց 5-10-20 հոգիանոց թիկնագորքերով: Թերեւս Հայաստանէն մինչեւ օրս թափ առած արտագաղթն է:

Ասոնք հարցականներ են որոնք պատասխանի կը սպասեն: Իսկ պատասխանը պատկան դեկավարութիւնը պէտք է տայ, ոչ թէ գեղեցիկ ու յուզիչ խօսքերով, այլ իր գործունէութեամբ: Չէ՞ որ աշխարհն այսօր փոքրացած է, ու ամէն բանէ տեղեակ է մարդը: Եթէ անարդարութիւններ տեղի կ'ունենան հոս արձագանգը աւելի մեծ կը հնչէ դուրսը, եթէ սպանութիւններ կ'ըլլան ու 10 հոգի կը զոհուի ու սպաննողները չեն գտնուիր, կամ ուրիշի վզին կը փաթթեն արդէն ոչ միայն ներսը, այլեւս նոյնիսկ դուրսը չի մարսուիր... Եկէք սփիւռքահայ երիտասարդի հոգեբանութեամբ դատենք, թէ ան ինչպէ՞ս պիտի ընդունի հայրենի հողի ազատագրման իր կեանքը նուիրած հերոսի քաղաքցիութիւն ստանալու մերժումը հայրենի իշխանութիւններուն կողմէ, ի՞նչ է, Նիճերիայէն կամ Գոնկոյէն

եկած ֆութպոլիստը աւելի կարեւոր է Հայաստանին... Մեկնաբանութիւնները ձեզի կը թողում:

Դուրսի հայուն խորթ է «տանիք» հասկացողութիւնը: «Տանիք»ը պետութիւնը պէտք է ըլլայ: Մարդը կ'ուզէ զալ իր փոքր դրամագլուխով, որով կրնայ հագիւ տուն մը գնել եւ տնամերձ խանութ մը բանալ իր ապրուստը հոգալու համար իրեն կ'ըսեն «տանիք ունի՞ս»... Սա անթոյլատրելի է: Կամ սփիւռքահայը կ'այցելէ հայրենիք, ու միայն Երեւանի շքեղ մեքենաները տեսնելով կ'ըսէ. «Եղբայր, այսքան հարստութիւն կայ հոս, ինչո՞ւ մեզմէ դրամ կ'ուզեն: Թերութիւն ունեցողը այս անգամ սփիւռքահայն է, որովհետեւ անիկա չի տեսներ միւս փոքր քաղաքներու անմխիթար վիճակները կամ գիւղերու դատարկութիւնը: Ան միայն Երեւանով կը գնահատէ ամբողջ Հայաստանը: Ինչպէս աշխարհի բոլոր երկիրներուն մէջ հոս գարկ պէտք է տրուի միւս քաղաքներուն գարգացման գործին: Երեւանը գոնէ մէկ մրցակից քաղաք մը պէտք է ունենայ, որն ալ այլընտրանք մը կ'ըլլայ բոլորին համար: Առաջարկ մըն ալ ունիմ, այն հայը որ կ'ուզէ ներգաղթելը նուազագոյնը 4 տարի հարկերէ պէտք է ազատուի, իսկ եթէ Երեւանէն դուրս կ'ուզէ տեղաւորուիլ այդ չհարկուելու ժամանամակամիջոցը պէտք է կրկնապատուի:

Հայրենիքը դուրսի հայուն պէտք է հրապուրէ ոչ թէ պատմական յուշարձաններով, բնութեամբ եւ անցեալով միայն այլեւ ներկայով, իր յարաբերութիւններով, որովհետեւ պատմութիւնը նաեւ ինքն է ուր իր կեանքը, որ իր ապրած ու չապրած յուշերով, իր իղձերով ու երազանքներով կը հիւսուի, եւ որքան հրաշալի կ'ըլլայ երբ իր հայրենի հողին վրայ կ'իրագործէ այդ բոլորը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՈ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

ԽՕՍՔ ԱՄԱՆՈՐԻ ԱԼԲԵՐՏ ԳԻՐՔԱՇԱՐԵԱՆ

<p>Բաժակս՝ Առաջինը բոլոր նրանց, Որոնք չկան մեզ հետ այսօր: Եւ երկրորդը՝ վշտիդ անանց Ով մարդկային սիրտ վիրաւոր:</p> <p>Բաժակս՝ Բոլոր նրանց որոնք հոգին Եղաւ բացուած հացի սեղան, Եւ ուշացած զինուորներին Ծխանի ծուխ, տուն հայրական:</p> <p>Բաժակս՝ Եւ ձեզ համար, իմ հեռաւոր</p>	<p>Իրար թիկնած թիւ երդիքներ, Որ ձեր սրտում ունէք հօր Սլացումներ երկինքն ի վեր:</p> <p>Բաժակս՝ Ահա եւ քեզ, մայր ալեհեր, Որ կրծքիդ տակ գիշեր ու տիւ, Ձսպել ես միշտ ինչ կսկիծներ, Եւ շանթերի տարափ անթիւ: Բաժակս՝ Ես քեզ եւ քեզ ով դու իմ սեր, Որ օրերիս իմ դժուարին Վառերցիդ ինձ յոյսի լոյսեր, Եւ ցնծութեան այս նոր տարին:</p>
--	--

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ



ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌԻ ՍԱՐԳԻՍ
Middle Eastern &
European Cakes
Delicious Pastry
For All Occasions
(Glendale, Anaheim & Pasadena)

Massis Weekly

Volume 27, No. 48

Saturday, JANUARY 3, 2009

S.D. Hunchakian Party Central Committee New Year's Message

Another year has passed into history and mankind is getting ready to face the new year, hoping that it brings better days for all nations.

2008 has been characterized by the international financial crisis, which is spreading around the world, threatening not only poor nations, but even those considered prosperous.

A whole economic system, until now considered as a "safe" system, finds itself on the verge of collapse, and the quick solutions and propositions are still in the distance to bring forth the expected results. The universal crisis has started to have its impact on Armenia, where the well-being of the population will suffer a new setback with its devastating consequences.

The economic crisis comes as an addition to Armenia's and its people's multiple other problems. The forged presidential elections and the following political instability, the presence of political prisoners, the killings of March 1st, the wavering attitudes towards the recognition of the Armenian Genocide, the giving-in to the Turkish requests, the unfavorable proposals for the Karabagh settlement, all these issues continue to further the distance between the Armenian government and its people. Armenians inside Armenia and outside in Diaspora have lost faith towards the leadership in Armenia.

The above-mentioned questions need to be addressed, now more than ever, and the Armenian nation needs unity inside and outside our homeland.

S.D.H.P. firmly believes that Armenia and the Diaspora, the two segments of the Armenian nation, must sincerely collaborate for our people to survive and overcome all challenges. In this respect, we will continue to do our best, so that Armenia becomes a land of freedom, justice, equality and democracy, regains the necessary internal comfort, the population remains attached to the land and trust be reestablished between the different segments of the population.

We hope that the New Year, this time, brings positive things to our motherland and Armenians worldwide, so that in the coming years we may greet each other with pride, confidence and certainty.

S.D.H.P. Central committee December 29, 2008

Global Downturn Slows Armenian Growth

Armenia's robust growth looks set to slow down to single digits this year in a further indication of the worldwide economic downturn's growing impact on its economy.

Official macroeconomic statistics for the first eleven months of 2008 show Gross Domestic Product increasing by 7.2 percent year on year. They also herald the end of a construction boom that has significantly sped up country's economic recovery in recent years.

The Armenian economy was on track to expand at a double-digit rate for the seventh consecutive year when stock markets in the United States, Europe and Russia began collapsing in September. Economic activity in the country shrunk considerably in the following months, even though local banks remained largely unaffected by the financial meltdown. According to the National Statistical Service (NSS), GDP in November was down by as much as 30 percent from the October level.

The NSS data show that retail trade and other services were the main contributors to the GDP growth rate registered in January-November 2008. Construction, another key driving force of the double-digit growth and the single largest sector of the economy in this period, expanded by only 1.6 percent, down from 12 percent registered in the first half of the year. The sector grew by 20 percent in 2007.

The construction boom, largely concentrated in the center of Yerevan, has resulted from skyrocketing real estate prices and strong demand in expensive housing and office space. Well-to-do Armenians living abroad, notably in Russia, are believed to have been among the main buyers of those properties.

Economists say the global financial and economic crisis will inevitably reduce cash inflows from them and, more importantly, a much larger number of migrant workers supporting their families in Armenia. A large part of the country's population is dependent on their remittances.

Another negative consequence of the crisis has been a sharp fall in the international prices of non-ferrous metals, Armenia's number one export item. Hundreds of employees of Armenian mining companies have already been laid off or sent on indefinite leave as a result. The country's two largest chemical enterprises have suspended their operations and are facing an uncertain future for the same reason.

The Armenian government says it can mitigate knock-on effects of the crisis by launching large-scale infrastructure projects and giving local firms better access to cheap credit. It is seeking hundreds of millions of dollars in loans and assistance from foreign governments and lending institutions.

Continued on page 4

Former Foreign Minister Aleksandr Arzumanian: "We Consider This Trial Illegal and Won't Stand up Because the Judge Has Neglected Our Rights,"

Under Armenia's laws regulating court hearings, trial participants must stand up when judges make their way into the courtroom. The seven oppositionists tried for attempting to "usurp state authority" and organizing mass riots after last February's presidential election refuse to comply with this requirement in protest against a politically motivated case.

The defendants, among them former Foreign Minister Aleksandr Arzumanian and three parliament deputies, remained demonstratively seated at the start of the third court hearing on the high-profile case on Saturday. The judge, Mnatsakan Martirosian, again construed this as a contempt of court and adjourned proceedings until January 9 moments later.

"We won't stand up no matter how many times you have us taken away," Arzumanian told the judge. He also demanded that Martirosian address him as "Mr. Arzumanian," rather than "defendant Arzumanian."

"We consider this trial illegal and won't stand up because right from the beginning the judge has neglected our rights," said another defendant, parliament deputy Miasnik Malkhasian. He suggested sarcastically that President Serzh Sarkisian cut short the trial with a decree setting punishment for each of the defendants.

Armen Harutiunian, the state human rights defender personally monitoring the trial, discussed the situation with Martirosian afterwards. He said he will meet other judicial experts to discuss possible ways of resuming the trial that would satisfy both sides.

"Because the Judicial Code requires [defendants] to stand up he can not start hearings after being treated disrespectfully," Harutiunian told reporters. "We are in a kind of deadlock. To me the positions of both the judge and the defendants are acceptable."

Armenia Still On U.S. Trafficking 'Watch List'

Armenia remains on an unflattering "watch list" of countries which the United States believes are a major source of human trafficking more than six years after its government acknowledged the problem and began combating it in earnest.

The Armenian authorities claim to have made considerable progress in cracking down on the practice and its most common manifestation: the transport of women for sexual exploitation abroad.

The problem came to light in 2002 when the U.S. State Department



Although the courtroom was mostly empty on Saturday, journalists and photographers were again barred from entering it and had to follow proceedings from monitors placed in an adjacent room. Court officials refused to explain the ban which Harutiunian condemned as "unacceptable."

Journalists were similarly barred from the courtroom during the previous court hearing held on December 23. It was marred by bitter verbal exchanges between defendants' relatives and plainclothes police officers brought into the courtroom.

Most of those relatives boycotted Saturday's hearing at the urging of the opposition Armenian National Congress (HAK). The opposition alliance claimed last week that the Armenian authorities need an excuse to hold the trial behind the closed door and are planning to provoke more ugly scenes in the court for that purpose.

In a related development, a group of civil rights activists monitoring conditions in Armenia's prisons has backed opposition claims that another defendant, Grigor Voskerchian, and at least two other oppositionists kept in Yerevan's Nubarashen prison were beaten up on December 23. A member of the group, Artur Sakunts, told RFE/RL that it submitted a corresponding report to Justice Minister Gevorg Danielian on December 25. He said Danielian forwarded the report to the Office of the Prosecutor-General.

included Armenia into its so-called Tier 3 group of nations which it thinks were doing little to stop human trafficking and could therefore be stripped of U.S. economic assistance. Armenia was removed from the blacklist and upgraded to the Tier 2 category the next year after what the State Department described as "significant efforts" taken by its government. However, the department downgraded the country to a Tier 2 "watch list" in 2005, citing the Armenian authorities' "failure to show evidence of increasing efforts to combat trafficking over the past year."

Turkish Perspective Should Turkey Apologize To The Armenians?

By Asli Aydintasbas

ISTANBUL—Should we apologize to Armenians?

It's almost a miracle, but I have somehow managed to avoid the "Armenian issue" throughout my journalism career. I never wrote a single column on it, even throughout the various diplomatic rows between Turkey and Armenia on whether or not the tragic events of 1915 were genocide.

During the time I covered Washington for a Turkish paper, I stayed a dispassionate reporter as the Armenian Diaspora tried year after year to pass various U.S. congressional resolutions condemning the 1915 events—and Ankara lobbied hard to ward these off.

The truth was, undeniably bad things happened in the Eastern provinces of the declining Ottoman Empire in 1915, but I had no idea whether or not they "amounted to" genocide.

Depending on whom you believe, 500,000 or 1.5 million Armenians were either forcibly deported or coldly massacred, either during the chaos of a civil war or by an organized state campaign. The Armenians in turn either killed thousands of Muslim Turks in an effort to establish an independent homeland, or they were fighting a civil war of liberation.

I am not trying to make light of the fact that this was a horribly painful episode, leading to the death of thousands of innocents. But today's discussion is largely semantic—"genocide or not?"

While most Turks are taught in schools that killing happened "on both sides" and do not believe their Ottoman ancestors committed the g-word, Armenians in the tiny modern Caucasus republic have built their national identity on the pain of genocide. It is to them what the Jewish Holocaust is to Israelis.

But the reason I have so far avoided the topic was not because of an inability to face the past, but because I felt I never could do justice to the mountains of books, memoirs and historic archives arguing one side or the other. After all, plenty of Turkish, Armenian, American and French historians dedicated lifetimes to this debate.

I, on the other hand, lacked that kind of attention span. At school, we were taught that the "so-called genocide" charge was trumped up by the Armenian diaspora because it was their *raison d'être*. Friends and family mostly seemed to think the Ottomans had committed some sort of "ethnic cleansing," but that it wasn't genocide. (Legally speaking, "war crimes" and "ethnic cleansing" do not necessarily mean genocide, the most heinous of all crimes against humanity.)

Մինչդեռ քրիստոնէութիւնը հիմնուած է ճշմարիտ յարաբերութեան վրայ ընդմէջ մարդու եւ Արարչին, մարդը անկատար եւ Աստուած կատարեալ, ու այդ յարաբերութեան է որ կը բխին ամէն բարոյական եւ իմացական գիտութիւն եւ արարք: Անոնց շարքին են գութ, բարեգործութիւն, սէր, ներողամտութիւն, հաւատք, յոյս, վստահութիւն, առաքինի կեանք, յարգանք, ծառայութիւն, ինքնաքննութիւն, համբերութիւն, արդարամտութիւն ու այս բոլորին պտուղները որոնք Աստուծոյ հաճելի եւ ընդունելի են որպէս ընծայ: Անոնք հոգեկան կեանքի պտուղներն են եւ ոչ թէ նիւթի եւ ֆիզիքականի, քանի որ Աստուած ինք հոգի է եւ միայն հոգեկան առաքինութիւններով մարդ կրնայ յարաբերութեան մէջ մնալ իր հետ:

Անաստուածը բոլորովին կ'անտեսէ ու կ'անգիտանայ թէ Աստուծոյ շունչը հոգի տուաւ մարդուն, որուն օրրանը սիրտն է, միտքն ու խիղճը, շարժումն յամենայն ղէպս մարդուս կամքով միայն: Բազում առակներ Յիսուս պատմեց ուսուցանելու համար «կեանքի շարունակականութիւնը իր լիութեանը մէջ», քան թէ կեանք մը որ կարճ ճամբաներ միայն ունի իր առջեւ: Հոգեկան արարքներ միտքն ու սիրտը գործի կը լծեն որպէս հաղորդակից եւ լծակից իրարու, որուն պտուղը կ'ըլլայ ճամբան հարթել ծանօթութիւն



ղէպի Աստուած եւ հաղորդակցութիւն Անոր հետ, որուն իսկական յայտնութիւնը եղաւ Որդին, որ իր կարգին հաստատեց Եկեղեցին Սուրբ Հոգիի ներգործութեամբ:

Գերագոյնին հանդէպ մարդոց տածած հաւատքն ու վստահութիւնը բարձրագոյն ճանապարհներ կը բանան անոնց առջեւ, մինչդեռ այդ երկուքին պակասը արդէն մարդս կը դարձնէ ինքնակոչ, ծառայութիւն ըստաւոր կը դառնայ ինքնանպատակ կեդրոնացած իր անձին համար միայն, որուն ուղղութիւնը անել ու փակ ճամբաներու կ'առաջնորդէ: Աստուծոյ գոյութիւնը եւ մարդուս կախումը իրմէ, Յիսուս Քրիստոսի աստուածութեամբը, անսահման փորձառութիւններ ընձեռած են, յարատեւ յոյս ներշնչած են, եւ տուած են մնալուն արգասիք աշխարհով մէկ: Իջմամբ մեր ժողովուրդի հողին վրայ՝ ի Սուրբ Էջմիածին յամի Տեառն 301 թուին Յարուցեալ Քրիստոս հայ ազգին ընծայեց այդ բացառիկ փորձառութիւնը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՄԻՍԱՔ ԷՔՄԷՔՃԵԱՆ

ՏՕՔԹ. ԱՆԱՀԻՏ ԷՔՄԷՔՃԵԱՆ ԵՒ ՏՕՔԹ. ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՄԱՆՈՐ

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա հողագուևը իր 365 օրերի պտոյան է աւարտին հասցնում եւ այսպիսով նոր ընթացք է սկսում, հինը պատմութեան գիրկն է անցնում, նորը՝ անյայտ ուղիների ուրուագիծ: Անվարան հինը իր տեղը գիշում է նորին, այս է կարգը կեանքի, ուստի գնացող 2008 տարեթիւը ուզի թէ չուզի իր տեղը պիտի տայ 2009 թուականին: Այդ հին տարւայ ընթացքում ականատեան եղանք Տարրատեսակ իրադարձութիւնների՝ նորանոր գիտական յառաջընթացներ, ընդհարումներ, բնութեան արհաւիրքներ, սնտեսական ճգնաժամեր, ժողովրդական ընդվզումներ, ազատագրական պայքարներ, նոր ընտրութիւններ, աշխարհը ղեկավարելու նոր հովեր ու ըմբռնումներ:

Տարին եղաւ առաւելաբար բարի իրադարձութիւններով, նաեւ շար ու տազնապալից: Այսպէս մեկնող տարւայ լաւ ու վատը ճաշակելով ընդառաջ ենք գնում նորին: Նորը գալով ի՞նչ ենք անելու ի՞նչ ենք աւելացնելու մեր կեանքին, մեր ընտանեկան եւ բարեկամական յարաբերութիւնների մէջ ի՞նչ տեսակ վերաբերմունք ենք ունենալու, մեր կեանքի յառաջդիմութեան համար ի՞նչ ծրագիրներ ենք մշակելու, ի՞նչ ենք անելու մեր ազգի եւ հայրենիքի համար, մեր երեխաների հայեցի դաստիարակութեան համար ի՞նչ ենք մտածելու, մեր մշակութային կենտրոնները եւ միութիւնները սերնդափոխելու ի՞նչ քայլեր ենք վերցնելու, մեր եկեղեցիներ գերծ պահելու աղանդաւորների քանդիչ ոգեորսորութիւնից ի՞նչ աշխատանքներ ենք տանում, մեր դպրոցականների հայկական ոգին առաւել խորացնելու ի՞նչ ենք մտածում, մտահոգիչ խնդիրներ, որոնք սպասում են մեր իւրաքանչիւրիս լուրջ մտածողութեան, արարիչ ու կազմակերպիչ ձեռքերի յառաջիկայ բացուող տարւայ ողջ շրջանին:

Նոր տարւայ խորհուրդը մեզ թելադրում է այդ բոլոր կենսական հարցերին՝ ազգային-հասարակական եւ անձնական, դիտել քննական հայեացքով: Անշուշտ իւրաքանչիւր տրամաբանող անձ իր տարիքին համապատասխան ձգտումներ եւ պահանջներ պիտի ունենայ եւ այդ ուղղութեամբ իր ճիգ ու ջանքը չխնայի դրան հասնելու համար ոնց որ ծառ ցանողը երբ պտուղ կամ հովանի է ուզում, պէտք չէ զլանայ նրան խնամք տանելուց: Եթէ այդ անձը ուսանող է, բարձրագոյն ուսման յետամուտ է, արդէն իսկ շատ պարզ եւ յստակ է, որ նա պիտի արժեւորի ժամանակը, ամէն մի րոպէն թանգ նկատելով արդիւնաւէտութեամբ հասնելու իր ձգտումներին եւ նպատակներին:

Իւրաքանչիւր գիտակից եւ ուսեալ երիտասարդ մեծ պատասխանատուութիւն ունի իր շրջապատի նկատմամբ, նա է որ իր համայնքի, ժողովրդի եւ հայրենիքի ապագայ առաջնորդն ու ղեկավարը պիտի դառնայ, ուրեմն այս երիտասարդը պէտք է գինուի թէ՛ բարոյական, թէ՛ սնտեսական եւ թէ՛ գիտական արժանիքներով իր ազգի եւ հայրենիքի ծառայութեան նուիրուելու համար, այսպիսի վեհ արժանիքներով բեղնաւորուած երիտասարդը իր ապագայ կեանքն է կերտում Ռաֆայէլ Պատկանեանի՝ «Մեծ մարդու» ժողովրդական տիտղոսին արժանանալով:

Մեր ժողովուրդը հնուց եկած ցաւ ու խոցեր շատ ունի, այս թափառական վիճակը հեռու իր պապենական երկրից, պանդուխտ, սիրուած աշխարհի տարածքում,

սա ինք մեծ ցաւ է, մեր ազգի մեծ պակասութիւններից մէկը, որը անհրաժեշտօէրն միաւորուելու կարիքն է զգում իր հայրենիքում, այսպէս տարտղնած կեանքի շարունակութիւնը կը նմանի առուակների, մերելով օտար գետերի մէջ՝ կը կորցնի իր ինքնութիւնը:

Յոյս առ Աստուծոյ մեր իշխանաւորները առաւել զգօն իրենց կարելին չեն խնայի երկրում առկայ դժարութիւններին լուծում տալու եւ սատար լինելու սփիւռքահայութեան ազգային ոգու եւ մշակոյթի պահպանման:

Եթէ այս անցնող տարիներում հայրենիքը քաղաքականօրէն եւ սնտեսապէս գտնոււմ էր աննպաստ պայմաններում, թող մեր պատասխանատու այրերը առաւել աշալուրջ մտածեն կարգ ու կանոնի հաստատման եւ պարապութեան ախտը վերացնելու եւ աշխատասիրութեան սէրն ու ոգին ամրապնդելու առումով:

Թող ամենայն գնով Արցախի գոյութիւնը իր ազատագրւած տարածքներով պահուի եւ պաշտպանուի, հազիւ լաջողուել է մեզ ի գին հազարաւոր աննման հայորդիների նահատակութեան յաղթութիւն ձեռք բերել մեր կորուսեալ հողերի մէկ հատուածը ետ բերելով, պատերազմում շահածը անհրաժեշտ է ոգի ի բռին տէր ու տիրական կանգնել, ուրեմն այս գալիք նոր տարւայ պահանջն ու թելադրանքը այն է՝ որ իւրաքանչիւր հայ պարտ ու պարտական է ամենայն գնով զօրավիգ կանգնի Արցախի ներկայ տարածքների ամբողջականութեան պաշտպանութեան: Այո՛, ճակատագրական պահեր ենք ապրում, յոյս ունենք գալիք տարում Հայաստան, Սփիւռք եւ Արցախ միասնական ճիգերով ի չիք կը դարձնեն սպառնալիքներն ու վտանգները: Վտանգի ժամանակ մանր-մունր հաշիւները դրոււմ են մի կողմ, ապա մէկ մարդու պէս միաւորոււմ ի դէմ թշնամու ոտնձգութիւններին: Ես որպէս սփիւռքահայ ընդհանուրի հետ միատեղ քաջ գիտակցում եմ, որ հայրենիքի հզօրացումը կապուած է բոլորիցս՝ միահամուռ պետականութեան զօրակցութեան:

Դէպի առաջ:
Դէպի հայկական ընտանիքի պահպանում ամենուր:
Դէպի հայրենիքի կառուցում:
Դէպի մեր արդար իրաւունքների ձեռքբերում:
Դէպի հայկեան մշակոյթի պահպանում եւ զարգացում:

Այո՛, նոր տարին գալիս է առանց ուշադրութիւն դարձնելու մեզ, նա գալիս է անուշաղիւր, անկողմնակալ եւ մարմանդ, մենք ենք, որ պիտի արժեւորենք, այդ եկող նոր տարւայ իւրաքանչիւր օրը մեր անելիքներով եւ գործերով: Այո՛, Նորը սիրելի է, քանի որ նա անարատ եւ մատղաշ է, մենք ենք, որ նրա անցնող ճամբան արդիւնաւէտ աշխատանքներով՝ սէրով, նուիրումով, իրար նկատմամբ հանդուրժողականութեամբ, «Եղբայր եմք մեք» ասելով զարդարենք եւ իմաստաւորենք՝ միշտ դէպի բարուն եւ վեհին ձգտելով, այն ժամանակ տարին վերջանալու պահին մի ետդարձ վերլուծական հայեացք գնացող տարուն հոգեպէս պիտի խանդավառուենք եւ արդարօրէն հրճուենք մեր ձեռքբերումների կատարուած գործերի չաջողութեան համար:

Նորանոր չաջողութիւնների եւ յաղթութիւնների տարի բոլորիս համար:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՅ ԴԵՏ ՆՈՐԱՆԱԼՈՎ ԴԱՄՕ ՍԱՅԵԱՆ

Դրաժեշտի ու հանդիպման Երանելի մի ակնթարթ...
Ձրը՛նգ, զրը՛նգ ծոր է տալիս ժամացոյցի զանգը հպարտ: Սեղանների վրայ թողած իր օրհնութիւնն ու իր բարին, Դարագատի յօժարութեամբ Դեռանում է յոգնած տարին: Մանուկ տարին իր սպիտակ հանձարուրից աչքը բացում, Ուրախութիւն, ուրախութիւն, Ուրախութիւն է խոստանում:

Ուրախանանք նոր տարու հետ, Նոր տարու հետ նորանալով, Դալարելով մերկեանքն ապրեմք, Ոչ թէ դանդաղ չորանալով... Խաղաղութիւն մաղթենք հողին, Մաղթենք ամէն սար ու ծորում Բողբոջներին բացուելու բախտ եւ ծիւերին՝ հասկաւորում: Ուրախանք նոր տարու հետ Նոր տարու հետ զօրանալով, Շտկենք սապատն այս աշխարհի Թէկուզ մի քիչ կորանալով:

ՆՈՐ ՏԱՐԻ ՎԱՅԱԳՆ ԴԱԹԵԱՆ

Ամէն, ամէն ինչի մէջ նորնեքսիրում մենք կեանքում, Նա մեզ թռիչք է տալիս, թեւ է տալիս ճախրանքում: Իսկ դու նոր ես, իսկ դու նոր, հէնց նոր իջար որպէս երգ, Դեռ ձիւներիդ մէջ ճերմակ չկայ ոչ մի ոտնահետք, Ու բաժակն իմ աստղացոյ լոյսերի մէջ պահած վեր, Ես քո կենացն եմ խմում նորեկ տարի նոր իմ սէր... Ե կ, իմ երկրի գինակից, Զահելութիւն իմ հողի,

Եկ ու փոշի մեր առջեւ նոր հեռուներ, նոր ուղի... Պողպատ ձուլող բանուորի պողպատին տուր կարծրութիւն, Այգեգործին՝ առատ բերք ու բերքերին՝ քաղցրութիւն: Ե կ, նոր տարի, ու դարձիւր նոր երազը մեր սրտի, Տիեզերքները ձեռող նոր աստղ դարձիւր ու հերթիւ, Դարձիւր մարմին առած տե՛նչ, դարձիւր երգ մի յաղթածայն եւ աշխարհը կամրջող խաղաղութեան ծիածան:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆԵՐՍԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Այս գիշեր Տօնական այս պահին Նստել եմ մեր բակի Թթնու շուաքում:

Յիշում եմ քաղաքը հինաւուրց Ու ծառը մեր բակի, Որ տնկեց հայրս Ու թողեց իրենից Յիշատակ, մասունք... Բայց աւա՛ղ, հիմա շատ

Ես շատ եմ հեռու, Մտահոգ եմ ու խորիւմ, Արդեօք կա՞յ մեր ծառը, Իսկ ո՞վ է խնամում Ծերացած թթնու, Որի տակ, շուաքում Թողել եմ մանկութիւն Ու թաղել երագներ... Տօնական այս գիշեր, Ա՛խ, ինչե՛ր, Ինչե՛ր եմ ես յիշում...

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԻԱՐ ԱԼՊԷՐԹ ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՆԱՂԱՐՏ ՊԱՅԵՆՔ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ - ՆՈՐ ՏԱՐՈՒՄ ԱՌԱՆՑ «ՄԻԱՆՇԱՆԱԿ»-Ի ԴՅՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Հայ ազգային գրականության կողքին, հայկական գրականության ընդհանրապես, գարգացել ու հարստացել է օտար գրականությանը:

Օտար գրականությունը հայ գրականության մէջ ներառնելու ճիգի մէջ, մեծ դեր են ունեցել, եւ ունեն մեր թարգմանիչ գրողներն ու բանաստեղծները, ինչպէս նաեւ գրականագէտներն ու բանասէրները, եւ՝ թարգմանությունը որպէս արուեստ ընտրած, հայերէնին գերազանցապէս տիրապետող թարգմանիչ անհատներ:

Մեր ողջ գրական շտեմարանի մէջ եղող թարգմանական գրականությունը է՛լ աւելի է հարստացրել հայի մտահորիզոնը, ճոխացրել է նրա աշխարհաճանաչողական կարողությունը, հարստացրել է նրա գիտելիքները ու հնարաւորություն է տուել ճանաչել աշխարհն ու տիեզերքը:

Անշուշտ, հիմնականում թարգմանական գրականությունն է հնարաւորություն տալիս ճանաչել այլ ազգերի, այլ երկրների գրականությունը, որի շնորհիւ էլ դիւրանում է փոխադարձ հասկացողությունը ոչ միայն հարեւան երկրների, այլև հեռու-հեռու երկրների հետ:

Թարգմանությունն ինքնին մեծ արուեստ է: Մենք հայերս, վատ չենք տիրապետում այդ արուեստին, շնորհիւ՝ մեր լեզուին բնորոշ մեծաքանակ հոմանիշ բառերի: Այդ ուրիշ, որ օտարների համար, դժուար պիտի եղած լինի մեր համով-հոտով, բազմիմաստ լեզուից թարգմանություններ անելը: Այդ է պատճառը, որ օտարների համար գրեթէ անհնարին է առանց բառի միտք բանին խառնելու թարգմանել, ասենք, «ցաւդ տանեմ» կամ ասենք՝ «դուրս գլուխ» արտայայտությունները:

Այսքան երկար նախաբանից յետոյ, կարծում եմ, արժէ անցնել բուն թեմային:

Պարզում է, որ Լոս Անձեյըսի ամերիկեան այն դպրոցներում, ուր բաւական քանակի հայ աշակերտներ կան, հայերէն «լեզուով» թուղիկներ են բաժանուում՝ տնօրէնների կամ դասուղիների կողմից պատրաստուած:

Ես ինչո՞ւ ԼԵԶՈՒ ԲԱՌԸ չափերտների մէջ վերցրեցի, - որովհետեւ այդ թուղիկների մէջ եղող «հայերէնը» անասամանօրէն հեռու է հայերէն կոչուելուց:

Թուղիկների բովանդակությունը անգլերէն լեզուով՝ միանգամայն ընդունելի է, իսկ ահա հայերէնէ՞ր, - Աստուած մի արասցէ...

Ահա մի օրինակ այդ գլուխգործոցներից.

Անգլերէն բնագիրը հետեւեալն է. Single Plan for Student Achievement-Annual Evaluation.

Ամերիկեան դպրոցների հայ ուսուցիչները այդ նախադասությունը թարգմանել են այսպէս.

- Միակ Մրազիր աշակերտներու վախճան-տարեկան գնահատում:

- Դու սիրելի ընթերցող, մի բան հասկացա՞ր այս գլուխ-կտրուկ «անախադասությունից»... - ես ել չեմ հասկացել:

դա դեռ չարիքի փոգրագոյնն է, գոնէ տառախալներ չկան:

Հապա ի՞նչ ասել հետեւեալ գուհիկ արտայայտության մասին, որի մէջ չեն պակասում նաեւ տառախալները, ահա այն.

«Ձեր նուիրատու թիւնը դպրոց բերեք Դեկտեմբեր December 12 առաջ կամ հետերնիթ բերեք երբ քաք Միլլեր ընտանիքի տօնական ուրախութեան երեկոյ Դեկտեմբեր 5ին»:

Որեւէ մեկնաբանություն, կարծում եմ անիմաստ է: Մնում է գարմանալ, թէ ինչպէս չի գտնուել մէկը, մէկ ուսուցիչ կամ «թարգմանիչ» գոհ դարձած որեւէ ծնող, որ կարողանայ տարրական դպրոցի չորրորդ դասարանի հայերէն սովորեցնել մեր լեզուն մորթել փորձող թարգմանիչին, կամ էլ համակարգչի վրայ հայերէն լեզուով շարել փորձող «մասնագէտին»:

Իմ ձեռքի տակ են նոր ուսումնական տարուանից սկսեալ, ամերիկեան դպրոցների կողմից հրատարակ իջած, տպուածութեամբ եւ գուհիկութեամբ լի երկու տասնեակից աւելի «հայերէն» թուղիկներ, որոնք սրտխառնուք առաջացնելու բացի, աներեւակայելի բողբոջ եւ ցասման ալիք են առաջացնում մեր հոգիներում, ու տխուր մտածումների առիթ տալիս, թէ ինչո՞ւ հայ երեխան ստիպուած պիտի լինի օտար դպրոց յաճախել, երբ մեր ժողովրդի միլիոնաւոր դուրաներ «կորչում» են Լոս Անձեյըս-Երեւան՝ այսօր արդէն շարժուելից էլ աւելի շարժուն ճանապարհին, եւ կամ էլ ծախսում են անտեղի ու անհեռանկարային:

Մինչ անշարժութեան դատապարտուած մեր ժողովրդի պատկան մարմինները կ'արթնանան ծանր թմբիկից, մեր հազարաւոր երեխաները ամերիկեան դպրոցներ կը յաճախեն խստագոյնս հետեւելով դպրոցի օրէնքներին, որոնցից մէկը անզգանգում է.

«Մի հագուելի գգեստ որ սաստիկ կամ ահաուելի է:

Մի հագուելի գգեստ որ մերել կամ արիւն ունի:

Ամէն տեսակ գէնք մի բերեք: Ձգեստի հագուստ պէտք է ծածկէ ուս եւ ստամոքս»:

- Ի՞նչ, սրտախառնո՞ւք ունեցաք, - վստահ եմ, ես՝ նոյնպէս:

... Սրտախառնուք, ընդվզում, բողբոջ (բայց ո՞ւմ դէմ), - այս ամէնը պարապ բաներ են մեր օրերում: Մարդիկ անում, ասում, խօսում են այնպէս, ինչպէս իրենք են ուզում: Քեզ լսո՞ղն ով է: Փորձիր որեւէ մէկին դիտողութիւն անել, - կ'ափսոսաս որ աշխարհ ես եկել...

Մեր լրագրերում էլ (հիմնականում անհատ մարդկանց պատկանող) չեն պակասում թէ՛ շարահիւսական, մտքի սխալներ ու նաեւ՝ ահուելի քանակի տառախալներ, օտար բառեր ու սխալ թարգմանություններ: Եւ ո՞վ պիտի հայերէն «սովորեցնի» այդ հրատարակիչներին, որոնցից ոմանք հագիւ թէ լրագրական ասպարէզի փորձ ունենան, թէեւ, ասեմ որ, թէկուզ աղաղակող սխալների, նրանց հրատարակություններն է, որ աւելի լայն տարածում ունեն ընթերցողների շրջանում:

Նորութիւն ասած չեմ լինի եթէ կրկնեմ մշտապէս ծամծմուած այն միտքը, թէ երիտասարդութիւնը թերթ չի կարդում: Հայերէն թերթ կարդացող հիմնական զանգուածը տարեցների ոչ մեծաթիւ խումբն է, որը բաժնուած է երկու մասի. բնիկ սփիւռքահայ մաշտոցեան, դասական ուղղագրութեանն է ընտելացել, իսկ

«եկուոր» սփիւռքահայը հիմնականում «հայաստանեան» ուղղագրութեան ջատագովն է:

Հայաստանի համար միատեսակ, հաստատուած ուղղագրութիւն կայ, դժուար է պարագան սփիւռքի համար: Չեմ կարծում թէ դիւրին պիտի լինի միասնական ուղղագրութեան անցնելը Սփիւռքում, մանաւանդ, եթէ որոշուի որդեգրել, ինչպէս իրենք են ասում, հայաստանեան ուղղագրութիւնը:

Չգիտեմ ինչ հեռանկարներ նկատի ունենալով է հայրենի կառավարութիւնը ստեղծել է Սփիւռքի նախարարութիւնը, բայց կարծում եմ, այդ նորաստեղծ հաստատութեան հարիւրից աւելի աշխատակազմի մէջ հագիւ թէ լինեն եզակի անհատներ, որոնք, քիչ թէ շատ գիտենալով Սփիւռքի բուն էութիւնը, կը կարողանան գործնական առաջարկութիւններու ամրապնդել Հայրենիք-Սփիւռք կապերը:

Սփիւռքը ճանաչելու համար քիչ է հեռակայ կարգով կապուելը սփիւռքի աւելի կամ պակաս յայտնի մարդկանց հետ, ու նրանց միակողմանի առաջարկութիւններն եւ թելադրութիւններն հիման վրայ նորանոր ծրագրեր մշակել սփիւռքի հոգաբարձի համեմատ համար:

Պէտք է ապրել սփիւռքում եւ այն էլ ոչ թէ մէկ-երկու տարի, այլ մէկ-երկու տասնեակ, որպէսզի կարողանաս փոքրիշատէ ըմբռնել ու հասկանալ թէ ինչ ասել է Սփիւռք:

Որքան էլ տարօրինակ թուայ, Սփիւռքի վիճակն այսօր աւելի յարափոփոխ է, քան էր՝ Հայաստանի անկախացումից առաջ: Սփիւռքի հարցերի հետ կապուած շաղախը է՛լ աւելի մածուցիկ դարձաւ, մանաւանդ, 1999ի Հոկտեմբերի 27-ի չարաբաստիկ դէպքերից յետոյ,

երբ Հայաստանի շուարուն վիճակի պատճառով խախտուեց նաեւ սփիւռքի ողնաշարը:

Սփիւռքի նախարարութեան առաջին պարտականութիւնը պիտի լինի մեր մատող սերնդին եւ երիտասարդութեանը ուժացումից փրկելու ուղիներ գտնելը, եւ յատկապէս սփիւռքի համար հեռարձակուող ռադիօ եւ հեռուստատեսային հաղորդումների որակն ու բովանդակութիւնը սփիւռքի պայմաններին յարմարեցնելու վճռակամութիւնը:

Եւ, այդ ամէնը իրականացնելու ճանապարհին առաջնային պարտականութիւն պիտի համարել օտար եւ թարգմանական սխալ բառերի ջնջումը մեր լեզուից:

Հապա ի՞նչպէս մաքրել այստեղի եւ հայաստանեան հեռուստածրագրերի հայերէնը: Դէ, սփիւռքի հեռուստատեսային ծրագրերը հիմնականում բիզնեսային պիտակ են հետապնդում եւ դրանց տէրերը հագիւ թէ մտահոգուեն մաքուր, անարատ հայերէն լեզու օգտագործելու անհրաժեշտութեան համար: Միանգամայն տարբեր պիտի լինի Հայաստանից սփռուող ծրագրերում հայերէն լեզուն օգտագործելու պարագան: Գոնէ այնտեղ պէտք է որ օգտագործուի մաքուր հայերէն եւ հնարաւորինս քիչ քանակի օտար բառեր, եւ, մանաւանդ ճշգրիտ հայերէն թարգմանություններ:

Վրդովեցուցիչ է գիտակցել, որ երկարամեայ կեանք ունեցող Տերմինաբանական կոմիտէ եւ Լեզուի ինստիտուտ ունեցող մեր հայրենիքը ժամանակ չի գտնում մտածել մեր լեզուի գլխին կախուած վտանգի մասին, մանաւանդ այս օրերին, երբ Հրանուշ Յակոբեանի ղեկավարած ՍՓԻԻՔ նախարար

Շար.ը էջ 23

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

ԱՆԱՂԱՐՏ ՊԱՅԵՆՔ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Շարունակում էք 22-էն

ընկերությունը նախաձեռնել է նորանոր ձևերով սերտացնել կապը հայրենիքի եւ սփիւռքի միջեւ: Փոխարարձ, ըմբռնելի հասկացողութիւնը սփիւռքի եւ հայրենիքի միջեւ լաւագոյն կարող է իրականանան երկու լեզուների մերձեցման, կամ լաւագոյն դէպքում միասնական ուղղադրութիւն որդեգրելու պարագային:

Եւ նրա՝ նախարար Հրանուշ Յակոբեանի եւ իշխանական այլ լծակների նախաձեռնելիք հայրենադարձութիւնն ու, իր իսկ խօսքերով՝ ՀԱՅԱՊԱՐՉՈՒԹԻՒՆԸ կարող է իրականանալ միայն այն դէպքում, երբ իր եւ պետութեան ղեկավար մարմինների հոգեբանութեան եւ գործելակերպի մէջ վերանայ «ներսեցի» եւ «դրսեցի» (ժամանակին Պոլսում է եղել նման բաժանում՝ բնիկ պոլսեցիների եւ գաւառացիների միջեւ) հասկացութիւնը եւ մենք՝ ԱնՊԱՐՇԻՍՄ՝ «ոգու» եւ «մտքի» խաղաղութեամբ (դարձեալ նախարարի խօսքերն են) հաւասարը հաւասարի իրաւունքով ճակատաբաց կը ճեմենք Հիւսիսային Պողոտայում...

Թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում այսօր սողոսկում են բառեր, որոնք թէեւ հայերէն են, սակայն բնաւ չեն արտայայտում այն միտքն ու ասելիքը, որ գործածում է ենթակա:

Մի քանի տարի առաջ ես յօդուած գրեցի «Կայանալ» բառի տեղի-անտեղի օգտագործման մասին: Մարդիկ չեն ուզում հասկանալ, որ ԿԱՅԱՆԱԼ բայ է, ոչ թէ ածական:

Ինչ որ է, որքան էլ գարմանալի՝ արձագանգող չեղաւ, բայց պակասեց «կայացած արուեստագէտ», «կայացած երկիր», «կայացած սերմ», «կայացած մարդ» եւ այլ անտրամաբանական մտքեր արտայայտողների թիւը:

Վերջին մի քանի տարուայ ընթացքում մեր խօսակցական լեզուի մէջ, անհետեւ թարգմանութեամբ մի նոր բառ է սողոսկել եւ դարձել բերնի ծամօն:

Եւ այդ բառն է՝ ՄԻԱՆՇԱՆԱԿ: Որքան որ դիտեմ այդ բառը արեւմտահայերէնում չկայ, եթէ կայ էլ՝ հաւանաբար, շատ հազուադէպ է օգտագործւում: Այսօր ամէն տեղ, ամէնուր օգտագործւում է ՄԻՇԱՆՇԱՆԱԿ-ը, եւ այդ բառն օգտագործող ամէն մի անհատ, հայերէն իմացողի հովեր առնելով օգտագործում է ուր որ պատահի:

Այնպէս լսւ է հնչում՝ ՄԻԱՆՇԱՆԱԿ...

Օրինակ, եթէ խօսակիցից հարցնես՝ «այս երեկոյ գալու էս ճաշկերոյթ-պարահանդէսի», - մի գարմանայ, եթէ պատասխանը լինի՝ «ՄԻԱՆՇԱՆԱԿ»: Հայաստանի ՀՀ հեռուստատեսային կայանի հաղորդումների ժամանակ մշտապէս կարելի է լսել այդ բառը, որ մենք տասնամեակների ընթացքում հազուադէպ ենք հանդիպել, մանաւանդ՝ խօսակցութիւնների, գրոյցների ժամանակ: Այսօր ասուողը չափերի է համուծւմ այդ բառի օգտագործումը հեռուստատեսային կայանի հաղորդումների ժամանակ մշտապէս կարելի է լսել այդ բառը, որ մենք տասնամեակների ընթացքում հազուադէպ ենք հանդիպել, մանաւանդ՝ խօսակցութիւնների, գրոյցների ժամանակ: Այսօր ասուողը չափերի է համուծւմ այդ բառի օգտագործումը հեռուստատեսային հաղորդումների ընթացքում: Հարցազրոյց վարողը եթէ դիմացինին

հարցնի՝ «Դուք հաւատո՞ւմ էք Արցախի անկախացման միջազգային ճանաչմանը», - հաւատացէ՛ք, պատասխանը կը լինի՝ ՄԻԱՆՇԱՆԱԿ՝ ով էլ որ լինի պատասխանողը. նախարար թէ՛ հասարակ պաշտօնեայ:

«ՄԻԱՆՇԱՆԱԿ» բառն ինքնին յուշում է, որ դա բարդ բառ է եւ կազմուած է «միայն, մի եւ «նշանակութիւն» բառերից: Էդ. Աղայեանի Բացատրական բառարանում «Միանշանակ»ը բացատրուած է հետեւեալ կերպ. միայն մէկ նշանակութիւն, մէկ իմաստ ունեցող, միատեսակ ածական:

Միանշանակ բառի ստուգաբանման նման, կարելի է ստուգաբանել նաեւ հետեւեալ բարդ բառերը, ասենք. Միանուագ, Միանուն, Միաշարժ, Միաշերտ, Համարժէք, Միարժէք, եւ այլ բառակապակցութիւններ:

Այդ ե՞րբ, Ի՞նչպէս պատահեց, որ մենք ուսուերէն ՕԴՆՈՋԱԶՆՕ բառը գործնականորէն, «անհրաժեշտաբար» բերինք ու խցկեցինք մեր խօսակցական լեզուի մէջ:

Հասկանալի է որ հարց տուողը հիմնականում դրական, հաստատական պատասխանի է սպասում դիմացինից, եւ կամ էլ ժխտական:

Վերոնշեալ կամ նման բազմաթիւ հարցերի դէպքում դիմացինին պիտի պատասխանել հաստատական հետեւեալ բառերով. ԱՆԿԱՍԿԱԾ, ԱՆՇՈՒԾՏ, ԱՆՊԱՅՄԱՆ, ԱՆՎԵՐԱՊԱՀ եւ այլ հոմանիշ բառերով:

Ոչ ոք չի կարող ժխտել, որ այսօր, քան երբեք, Հայաստան-Սփիւռք կապերի նման ամբողջ գոտուած կապ չի եղել: Որքան էլ «խռով» կեցուածք որդեգրի Սփիւռքը Հայաստանի հանդէպ, միեւնոյնն է. մշտապէս փորձում է որդեգրել լաւ, ընդունելի երեւոյթները (որքան էլ դրանք անարժէք լինեն միջազգային չափանիշով): Դրան հակառակ Հայաստանն էլ որդեգրում է ոչ թէ Սփիւռքի ցանկալի կողմերը, այլ բուն ամերիկեան, շատ անգամ մեր նկարագրին անյարիր երեւոյթներ, որոնք մերժուած են սփիւռքահայի կողմից:

Ի վերջոյ՝ մեր ասելիքի ճշդութիւնը բանին.

Լոս Անճելըսի բազմաթիւ հեռուստածրագրերում մշտապէս կարելի է հանդիպել ՄԻԱՆՇԱՆԱԿ բառի անտեղի, անիմաստ օգտագործմանը:

Մշտապէս պէտք է յիշել, որ ժողովուրդը սիրում է կարճ, միավանկ, երկու-երեք վանկանի բառեր օգտագործել, այստեղից էլ՝ որքան ուզում ես ասա, թէ՛ հայերէն չէ «Ֆիլմ» բառը, միեւնոյնն է, նա էլի ու էլի չի ասելու «շարժանկար»: Ուստի, չ'արժէ ծայրայեղութեան մէջ ընկնել ամէն ինչ «հայացնել» ճիգի մէջ՝ ծիծաղելի չղառնալու համար: Այն օտար բառերը, որոնք այլազգայն են օգտագործում՝ մէկը-միւսից վերցնելով, ու մեզ համալ էլ հարագատ են դարձել, ըստ իսկ կարելի է օգտագործել:

Արհեստականորէն հայացուած բառեր կան մեր բառապաշարում, որոնք այսպէս կամ այնպէս չեն մտնում կենցաղի մէջ, որովհետեւ շատ դէպքերում դրանք բազմավանկ են, իսկ խօսակցական լեզուն սիրում է կարճ բառեր, այնպէս որ, հանէ՛ք մեր լեզուից ՄԻԱՆՇԱՆԱԿ բառը:

Թէ՛ չէ, մենք էլ մի օր կը ԿԱՅԱՆԱԼՔ ու, անհրաժեշտաբար, ՄԻԱՆՇԱՆԱԿ կը գանք Հայրենիք՝ հայերէն լեզու սովորելու...

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՄԻՍԱԿ ՄԵԾԱՐԵՆՑ

Այս գիշեր հազուած-սրգուած Նոր Տարին Առտուան լոյսին, կը սպասւտենդոտ, Ոգիներ անդարձ կորագցիմ տարին Մերգրկէնհիննիմայներըծանօթ.

սրտին Վառ յոյգերու մէջ կ'օրրե՛ գայն ուժգին. Բորբոքած հուրքովն յոյգերու անշէջ Կը ծղփան սիրտերն ըղձանքներու մէջ:

Նոր տարուայ ըմծայ պայծառ լուսինկան Սագեր է գիւղին լեռերը բոլոր. Երգերը ծորին, ճիչերը մանկան Կ'արծագանգեն թունդ խաղերով մոլոր:

Գիշերուան վերջին պահերուն լըռին Չայներն ու լոյսեր յանկարծ կը մարին Եւ բեհեզներովն կապոյտ կամարին Պճնրւած աշխարհկու գայՆոր Տարին:

Իղծերու շարք մը պլլըւած

ԵՂԵՆԻ ՀԱՍՕ ՍԱՅԵԱՆ

Անտառից եկած սիրուն եղեւնին Յիշում է կանաչ իր ընկերների: Արահետներն է յիշում ծիւնի տակ, Յիշում է բացատն ու բուքն սպիտակ: Երկինքն է յիշում իր գլխի վերեւ Եւ իր մայր անտառն ասեղնատերեւ: Հոպերն է յիշում մազարնանային, Որ իրեն այնպէս օրօրում էին: Վաղորդեան ցօղի գոհարն է յիշում Ու մայրամուտի թեւերն ապրեշում: Յիշում է սօսափն ամէն մի ծառի: Խարոյկն է յիշում անտառապահի Յիշում է բոլորն ու չի ափսոսում Որ էլ անտառի երգը չի լսում:

Ինչո՞ւ ափսոսայ, երբ իր թեւերին Գարուն է բերել երեխաներին: Գարուն է բերել այս ծմեռ օրով Եւ տուն է մտել կանաչ շորերով: Ե՞րբ է մա այսպէս զուգուել գարդարուել Եւ մարդկանց այսքան հրճուանք պատճառել: Ե՞րբ է մա եղել այսքան երջանիկ Ու ե՞րբ է տեսել այսքան խաղալիկ: Ե՞րբ են նրա մօտ այսքան մանուկներ Երգել ու պարել մինչեւ ուշ գիշեր: Չ ա թ ո ղ ա թ ա ն ք ն ե թ ո Վ , աստղերով իր պերճ Կանգնել է ուրախ մանուկների մէջ: Այնպէս հպարտ է մայրուն աշխարհին, Կարծես հէց ինքն է բերել Նոր տարին:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՀԷ ԵՒ ՄԱՐՕ ԱԶԱՊԱՀԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՎԱՅԱՆ ՏԵՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

Խմբագրական Ծանոթություն
Դեռևս մամուլի տակ էր Սարգիս Վահագնի՝ «Գրական Համաստեղություն»...

Նախ եւ մանաւանդ՝
«Սեւ գիշեր եւ յուշեր եւ խոհեր անհամար
Խնդրութիւն հեռացած եւ անցած եւ անդարձ, -
Տրտմութիւն մեծաւոր, միաձայն, միալար...»

Իսկ յետոյ յանկարծ՝
«Ուզում եմ, վաղուայ ցնծութեան գուշակ՝
Կարօտս նետած լուսեղէն հեռուն,
Վառել երգերս որպէս դօշակ...»

Առեղծուած էր, թէ հակասութեան թնճուկ: Մութ ու ցուրտ անուշիկ էր մթնշաղի, թէ՛ առտուայ գեղածիծաղ լոյս: Դեռ աշնանային մեղմագեղ թախի՞ծ անհատնում, թէ՛ գարնան երգ վառման: Վհատութիւն յուսաբեկ, թէ՛ լաւատես խնդութիւն: Ո՞ր մէկն էր Տէրեան բանաստղծը: Հարցեր՝ որոնք դեռ երէկ չէին յարուցուել մեզի համար, մեր ակամայ անգիտութեան պատճառով: Որովհետեւ, եղաւ ժամանակ, երբ մեր դպրոցական սեղաններուն դրուեցան միայն «Մթնշաղի Անուշիկներ» գիրքը եւ Վահան Տէրեան մեզի ներկայացուեցաւ թախիծի ու մշուշի երգիչը որպէս: - «Վահան Տէրեան երգած է մշուշը, ցաւը, նրբութիւնը, անձին նուազկոտ տազնապանքը եւ լուսնայալային փափկութիւնները, որոնք մեր հոգիներուն խորը երբեմն կը յամառին, փոխարինելու չափ օրունակ արեւը», պատգամած էր մեզի Մեծն Օշական («Արեւմտահայ Գրականութիւն», էջ 598):

Սակայն եւ այնպէս, նոյնիսկ միակողմանի ձեռով ներկայացուած այն Տէրեանն իսկ պիտի դառնար պաշտելի անուն մը մեզի համար, որովհետեւ անոր քնքուշ եւ թախածալուր երգերուն մէջէն կը ճառագայթէր բիւրեղաճաճանչ ու վճիտ հոգին իսկական բանաստեղծին, շնորհիւ նուրբ ու շքեղ անոր արուեստին, երաժշտական ու քնարական լեզուին ու ոճին:

Իսկ երբ ունեցանք կարելիութիւնը հաղորդուելու տէրեանական ամբողջական քերթողութեան, գտանք որ բազմակողմանի եւ բազմերանգ բանաստեղծ էր Տէրեան, բարդ՝ իր հոգիին մութն ու լոյսով, տարուբեր՝ կեանքի տեղատուութեամբ եւ մակընթացութեամբ: Ան, թախիծին, ներքին տառապանքին, կարօտի մորմօքին, աշնան ու մթնշաղի մեղմ քնքուշութեան կողքին երգած էր նաեւ խինդն ու գարունը, սէրն ու կինը, Նախիրին ու Հոկտեմբերը, ցասումն ու ընդվզումը, պայքարն ու վառ յոյսը վաղուայ ծաղկումին: Եւ այս բոլորը՝ մարդկայնաբոյր հարազատ շունչով, նոր խօսքով եւ նուրբ արուեստով:

Իր քերթողութիւնը դէպի արդիականութիւն մեծ ուստում մը արձանագրելով արեւելահայ մեր քնարերգութեան մէջ, դարձաւ լուսաւոր սահմանգիծ-անկիւնադարձ մը բախտորոշ: Սահմանագիծը՝ հին աւանդին եւ անկիւնադարձը նոր խոյանքին: Իրմէ առաջ կային թումանեանն ու Իսահակեանը: Իրմէ ետք եւ իրմով եկաւ Չարենցը: Իր քերթողութիւնը անկարելի դարձուց շարունակութիւնը բարբառային, անվերասլաց այն բանաստեղծութեան, որ ժողովրդայինի

եւ իրապաշտութեան պիտակումներով կ'արդարացնէր իր գոյութիւնը: Այս էր նշանակել սակայն ուրացումը թումանեանին եւ Իսահակեանին: Ընդհակառակը, իր առաջին քայլերուն տակ կը սնանէր, կ'աւելուորէր անոնցմով: Բայց եւ այնպէս, իր ծաղկումն ու պողաւորումը պիտի ըլլային տարբեր՝ անտեսակոխ ուղիներով եւ հանգրուաններով: Տէրեանի զգայնութիւնը այլ երանգի բունկումներով փայլատակեց, իր արուեստի ըմբռնումն ու իրագործումը պարզապէս տարբեր տեսլականներու հետամուտ եղան: Գաւառային սահմանափակուածութիւնը, գեղջուկ պարզունակութիւնը, անփոյթ հանդերձանքով հրամցուած ճաշակն ու ձեւը ա՛լ չէին կրնար որեւէ հեռանկար խոստանալ քաներորդ նոր դարու լուսաւոր սեմին հասած, մեծ մայրաքաղաքներու արագաթուիչ կշռոյթին, լայն մտածողութեան մտոյցած քաղաքացի բանաստեղծին: Տէրեանին վիճակուեցաւ ամէն բանէ առաջ, մեր արեւելահայ բանաստեղծութեան բերել քաղաքներու հեքն ու տազնապը, կշռոյթն ու զգայնութիւնը, մտածողութիւնն ու ճաշակաւոր վայելչագեղութիւնը: Անշուշտ էմիլ Վերհարն մը չեղաւ ան: Հեռու մնաց քաղաքերգութեան: Քաղաքներուն մեքենական, գործարանային ծուխն ու ժխորը չէ որ նկարեց ան, եւ ոչ ալ՝ պողոտաներուն եւ գոլհներուն հեւասպառ վագոն ու հրմշտուկը: Այլ տուաւ քաղաքային մարդուն բարդ ու խրթին ներաշխարհը, անոր աշխարհահայեցողութիւնը, կեանքին կշռոյթը: Տէրեան անպեղ հորիզոններու գեղեցկութեան հետամտողը դարձաւ: Իր կիրթ ու գեղագէտ ճաշակով մաքրեց, գտեց, յղկեց եւ նրբացուց արեւելահայ քերթողութեան լեզուն: Անոր ընձեռեց նրբերանգներու կախարդանքը եւ գայն դարձուց աւելի երաժշտական ու ճկուն: Տուաւ արդիականութեան փայլն ու վայելչագեղութիւնը: Կարելիութիւնը՝ միանգամայն բարդ ու նուրբ հոգեվիճակներ եւ մտածելակերպ արտայայտելու: Ու Տէրեանի մօտ, նրբերանքի հասկացողութիւնը չի սահմանափակուել լոկ լեզուական, բառերու, պատկերներու եւ երանգներու նրբահիւսութեամբ, ոչ իսկ նրբաճայնութեամբ, այլ կը դրսեւորուի եւ կ'ամբողջացուի նաեւ մտածումի, զգացումի, կեցուածքի եւ ապրումներու նրբակերտ յարաբերականութեամբ: Այսպէս՝ իրեն համար սենն ու սպիտակը, մութն ու լոյսը, վիշտն ու խինդը, իրականն ու վերացականը հակոտնեայ, իրերամերժ կաղապարումներ չեն, այլ՝ համատեղելի, գուզնութաց, գիրար ամբողջացնող եւ գիրար բա-

ցատրող իրադրութիւններ, որոնք կիսաշեշտերու, լուսաստուերներու եւ միջներանգներու կախարդանքով կը ստեղծեն ոգեղինացած աշխարհը տէրեանական բանաստեղծութեան, ուր ամէն ինչ, ամէն իր ու էակ իր շուրջ ունի ինքնուրոյն լուսային, հնչական եւ երանգային ճառագայթում ու թրթռացում, վարանող, սրսփացող ձեւն ու կերպարը, գորս կարելի է նրբերանգներու նօսրութեամբ միայն արտայայտել եւ թելադրել՝ յաճախ բառերուն սոսկական իմաստէն աւելի անոնց հնչական գունեղութեամբ, անոնց արթնացուցած զգայական արձագանգներով: Տանք քանի մը յատկանշական նմոյշներ.

«Օտար դաշտերի անանց մշուշում,

Տխուր լուութեան գիշերն է իջել. Իմ սիրտը յաւետ թախիծն է մաշում,


Սի լուսէ երգ է իմ հոգում մագել...»:

Այսպէս՝ «տխուր լուութեան գիշեր», «սիրտը յաւետ մաշող թախիծ» եւ «մի լուսէ երգ», այնքան բնականօրէն մէկտեղուած քով քովի՝ առանց ջանքի եւ հակասութեան: Որովհետեւ, «տխուր լուութեան գիշեր»ը անթափանց, սեւ գիշեր չէ, այլ՝ դաշտերու նոյնիսկ անանց մշուշը անոր տուած է թափանցկութիւն մը, մշուշի յատուկ կաթնալոյս մը, որ կը դիւրացնէ սրտի մաշող թախիծին փոխակերպումը «լուսէ երգ»

Իսկ ուրիշ տեղ մըն ալ՝ «Սի անձամօթ ձեռք, նուրբ մշում,

Անցեալն ու ներկան իրար խառնում, Իմ սրտում ոսկէ անձրեւ է մաղում

Սի քնքուշ լոյս կայ իմ հոգում



համար, Ամէն ինչ ունի չմեռնող մի կեանք, Կայ խորհրդաւոր դիւթող մի խաւար,

Ուր բախտից քաղցր են տրտունց ու տխրանք»:

Հոս ալ՝ «մշուշ, ոսկէ անձրեւ մաղուող եւ քնքուշ լոյս» մէկտեղուելով «դիւթող խաւար»ին եւ «բախտից քաղցր տրտունց տխրանք»ին հետ, կը ստեղծեն մութ ու լոյսի այնպիսի վէտվիտում մը, երանգներու թափանցկութիւն մը, ուր հոգեզմայլանքի վիճակը կը դառնայ բնական հոգեվիճակ: Ա՛լ հեռու չէ կախարդանքը.

«Սահուն քայլերով, անցմար, որպէս քնքուշ մութի թել,

Սի ստուեր անցաւ ծաղիկ ու կանաչ մեղմիւ շոյելով,

Իրիկնաժամին թփերն օրօրող հովի պէս թեթել,

Շարք էջ 25

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍ ԹՈՓԱԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՎԱՐԱՆ ՏԵՐԵԱՆ

Շարունակում էք 24-Էն

Մի ուրու անցաւ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...»

Այս գոհար քառատողին մէջ, պարիկ աղջկայ անցնող կախարդանքին քով կ'արժէ ցոյց տալ աստիճանաբար ձեւաւորուող, գունաւորուող միւս կախարդանքը ձերմակ գոյնին, որ «աննշմար, քնքուշ մութի թեւ, ստուեր, մեղմիւ շոյեւրով, հովի պէս թեթեւ ու գունատ» կիսավրձիւնումներէն ետք կը բացուի ամբողջութեամբ ձերմակ»ին մէջ: Այսպէս, երկու կախարդանքներ, միահիւստեամբ՝ կը ստեղծեն հիանալի տպաւորութիւն դիւթանքը սպիտակ հագած աղջկայ անցքին: Սա փոխանցումն է նկարչագեղ տպաւորապաշտ դպրոցին՝ նկարչութեանն քանաստեղծութեան անցած: Ոմանք ուզեցին խորհրդապաշտութեան անունը տալ անոր եւ Տէրեանը միկրոեցին այդ պիտակումով: Ճիշդ է՝ եւ ճիշդ է՝ այս կաղապարումը: Ճիշդ է՝ եթէ նկատի առնենք խորհրդապաշտութեան մեծագոյն վարպետին, Մայրամէին սա սահմանումը, թէ «առարկաներուն հայեցումը, անոնց առթած երազանքին թռչող պատկերը երգ է, բանաստեղծութիւն»: Քիչ առ քիչ յուշել, ուրուագծել առարկայ մը, ցոյց տալու համար հոգեվիճակ մը կամ հակառակը, ընտրել առարկայ մը եւ անկից, աստիճանական յայտնութիւններով բխիւնցնել հոգեվիճակ մը»: Այս տեսանկիւնէն դիտուած, իր ձեւով եւ արուեստով, խորհրդապաշտ մըն էր Տէրեան: Բայց անոր կը պակսէր խորհրդապաշտութեան էական ոգին որ կը դրսևերուէր ընդհանրապէս անհատապաշտ կեցումներով: Եւ անկումային տրամադրութիւններով: Տէրեանի թախծերգութիւնը բնաւ չի բաղդատուիր ֆրանսական եւ ռուսական խորհրդապաշտներու ոչնչապաշտութեան եւ յոռետեսութեան հետ: Իր թախիծն ու կարօտը, սէրն ու տագնապումը, երազանքն ու նոյնիսկ վհատութեան պահերը հիմնովին տարբերեցան Վեռլէնի մը, Ռեմպոյի մը, եւ կամ նոյնիսկ Ալեքսանդր Պոլքի մը եւ Եսենինի մը նոյնանուն ասպրումներէն, որոնք գլխազիրով գրուած, վերացական թախիծն էին, կարօտը, Սէրը եւ Տագնապը՝ ինքնանպատակ եւ սալոյնաին: Տէրեանինը եղաւ հեռաւոր ու ցուրտ քաղաքներու մշուշին եւ առանձնութեան մէջ մորմոքող հայ մարդուն թախիծն ու տագնապը, կարօտն ու տուայտանքը: Սա միայն ազգային երանգաւորում կամ տեղական գոյնի տարբերութիւնն չէր, այլ ասպրումներու նոր, իւրաքանչեւ որակ: Ճիշդ է թէ Տէրեանի մօտ ալ, նոյնիսկ աւելի սրուած ձեւով առկայ է խորհրդապաշտներուն այն մասնաշատուկ ձգտումը՝ «տիսեղծ առօրեայէն, քաղքենիական տափակ եւ հեղձուցիչ միջավայրէն փախուստը, բայց բոլորովին տարբեր է «ապաւինարան»ը: Երբ Վեռլէն մոռացումը կը գտնէր ալքով շոգիներուն մէջ, իսկ Ռեմպո գայն կը փնտէր փրփրկեան իր փախուստին մէջ եւ Մայրամէ ալ գայն կ'որոնէր իր «փղոսկրեայ աշտարակին» մէջ՝ վերացական եւ ինքնանպատակ գեղեցկութեան պաշտամունքին հռչակումով, Տէրեանն, իր հայ մարդու ուրոյն տրամաբանութեամբ նոյն վիշտերուն մոռացումն ու հոգեկան մագդոյրը կը փնտէր եւ կը գտնէր «Նայիրի»ին՝ իր «եթեմապատիկ խոց-

ուած Տիրամայր» հայրենիքի գորովանքին մէջ: «Նայիրի»ն Տէրեանի քերթողական աշխարհին մէջ ինքնուրոյն տիեզերք մըն է, ուր յաճախ կ'ապաւինի բանաստեղծին հիւանդ ու տառապող հոգին, հոն սուզուելով, գտուելու, մաքրուելու համար: ... «Մշուշի միջոց... տեսիլ դիւթական Բացումն է կրկին Նայիրի տրտում: ... Քեզ հետ եմ կրկին.- իջն ում է անդորր, Անտուն, թափառիկ յոգնած իմ հոգում: Գիտես դու մեղմել եւ ցաւ եւ խոկում Ու վանել սրտից տրտումը անօրոր»: Հպարտութեան եւ յոխորտանքի ո'չ մէկ հետք կարելի է գտնել այս տեսլականացումին մէջ, որով, նաեւ ոչ մէկ թեքում դէպի որեւէ ազգայնամտական քարոզչութիւն: Այլ՝ միմիայն սրտցաւ գրոյց մտերիմ եւ գորով անսահման: Համակ սէր ու գորգուրանք է Տէրեանի վերաբերմունքը հայրենիքին հանդէպ, վիշտ ու մորմոք՝ ցաւատանջ ճիշտ ցասումի: «Մի՛ թէ վերջին պոետն եմ ես Վերջին երգիչն իմ երկրի, Մահն է արդեօք թէ մի՞ ցըր քեզ Պատել, պայծառ Նայիրի»: Անշուշտ տկարութեան եւ վհատութեան պահ մըն է այս հարցադրումը եւ այնքան բնորոշ՝ մեր ազգային օրհասին դիմաց: Սակայն տեսանողը, «վաղուայ ցնծութեան գուշակ» բանաստեղծը շուտով պիտի վերադառնէ իր հոգեկան կորովը, ծառանայ պիտի սեւ ճակատագրին դէմ եւ գոտեպնդման կոչ արձակէ նաեւ. «Ժամն է, ել մորից, իմ ծիրանավառ, Ձրահաւորուիր խանդով խնդագին, Վառիր երկունքի գիշերում խաւար Յրով մկրտումս մայրիեան հոգին»: Տէրեանի մօտ, բանաստեղծական սին ցնորք կամ գեղում չէր վերազարթնումի այս կոչը, այլ՝ ընդհակառակը, իսկ հաւատքն էր ու գործունէութեան հրաւէր՝ քաղաքացի-հայրենասէր, պետական մարդուն համար, որ հեռատեսութեամբ կանխածրագրեր էր հայրենիքի փրկութեան ուղին եւ գայն կապեր՝ իր հաւատացած ընկերակազմի ընդգրկումին հետ: Սէրը՝ իր բոլոր հանգրուաններով, տենչով ու երազանքով, խինդով ու թախիծով, կացութիւններով ու անուշ պահերով, բախումներով ու հեշտանքներով, փնտռումներով եւ տառապանքով դարձաւ շարժիչ ոյժն ու ներշնչարանը տէրեանական քերթողութեան: Դարձեալ հպատակ՝ դառն ու անուշ երանգաւորումի եւ ալեւորումի: Տառապանքը սիրոյ անբաժան ստուերն է, կ'ըսուի: Գոնէ Տէրեանի սիրերգութեան մէջ ճշմարտութիւնն է այդ: Տառապանք՝ անտարբերութեան, մերժումի, պէրանքի, անհասկացողութեան, անգութ խաղի ու նախանձի դէմ յանդիման: Բայց այդ տառապանքն իսկ, Տէրեանի մօտ կը քաղցրանայ սիրոյ իր առկայութեամբ իսկ, որ ամբողջական չգոյութեան պարագայէն գերազանցի է, որպէս փրկութեան լաստ՝ ընդդէմ կեանքի ծանծաղու-

թեան, գորշ առօրեաներուն: Այս պատճառով ալ դառնութեան կամ անէծքի տեղ չկայ տէրեանական քերթողութեան մէջ: «Ես կը գամ, երբ կը լինես տրտում, Երբ երագներդ յաւետ կը մեռնեն, Ձեռքդ կը բռնեմ, ցաւդ կ'ըմբռնեմ Կը վառեմ ուրիշ լոյսեր քո հոգում»: Բիւրեղի պէս վճիտ, ժայռերէն իջնող Չուրի շիթերուն պէս գուլալ այս տողերը արդէն կու տան իրաւունք Տէրեանին դառնալու մեր ամենէն ամբողջական եւ լիարիւն սիրերգակ բանաստեղծներէն մէկը՝ բախտաւորութեամբ ամենաժողովրդականը ըլլալու պատիւով: Վկայ՝ պատկառելի թիւր երգի վերածումած եւ տակաւին երգուող իր սիրոյ քերթումներուն: Միրոյ, ներդրամութեան, նուիրումի եւ գոհաբերութեան այս ոգին, ներշնչարանն իսկ է տէրեանական միւս հիմնական յատկութեան՝ մարդասիրութեան եւ բնութեան պաշտամունքին: Բնութեան սէրը, անոր խորհուրդ խորինը Տէրեանի մօտ ոչ թէ որպէս տեքոր կամ շրջանակ գործածուած է, այլ՝ որպէս շնչող, ներշնչող, հոգեկից եւ խորհրդակից գոյութիւն, ուր կ'արտացոլուին բանաստեղծին հոգեկան ապրումներն ու հոգեվիճակները իրենց նմանողութեամբ: Բնութիւնը ապրող, կենդանի տարր է որուն հետ երկխօսութիւն կը հաստատուի եւ որմով մտորումներ եւ խոհականութիւն կը ձեւաւորուի: Այսպէս՝ գարուն, աշուն, գիշեր, վերջապէս, մշուշ, ծաղիկ ու ծառ ըմբռնումները միացած են խինդի, թախիծի, կարօտի, երազանքի, քնքանքի, նրբագեղութեան եւ լիշատակի խորհրդանիշին հետ եւ

ներկայ են գրեթէ ամէն քերթումածի մէջ, մշտանորոգ եւ անկրկնելի նրբութեամբ, ստեղծելով եւ ջերմացնելով պահն ու մթնոլորտը, ուր մարդը կը մարդկայնանայ բնութեան կախարդանքին մէջ, կը դառնայ հաշտ ինքիր հետ. Տէրեանի սէրը մարդոց հանդէպ նախ ծորող բարութիւնն է, ապա՝ վճիտ հոգիէն բխող լոյս՝ գորս բանաստեղծը կ'ուզէ անխտիր բաժնել ու տարածել բոլոր մարդոց: Երբ երջանիկ է սիրով եւ հարուստ՝ բնութեամբ, իր երջանկութեանն ու սէրէն կը ձգտի բաժնի հանել բոլոր մարդոց. «Անհուն աշխարհում բացսիրտ, ազատ Ողջունել սիրով անց ու դարձողին, Օրհներգել կեանքը, աշխարհին ժպտալ, Յարագատ լինել ջրին ու օդին Եւ անհուն սիրել ու գթալ...» Հոս, մարդոց հանդէպ սէրը տակաւին վերացականի հով մը ունի եւ անպայման գեղուն տրամադրութեան արդիւնք է: Նոյնիսկ միամիտ է ու կրաւորական: Սակայն հետզհետէ կեանքին եւ շրջապատին հետ սերտ շփումով իր մարդերգութիւնը կը մերձենայ գիտակցուած, կողմնորոշուած եւ մասնաւորութեամբ անսպառ սիրով՝ բոլոր գրկուածներուն եւ «կեանքի որբեր»ուն հանդէպ: Շուտով պիտի հունաւորուի ան դէպի դասակարգային գիտակցութիւն եւ կողմնորոշում: Մոսկուայի Լազարեան ձեմարանի իր շրջապատը եւ բարձրացող ռուսական բանուորական յեղափոխութեան ալիքը հետզհետէ պիտի ներգրաւեն բանաստեղծին համակրանքն ու ապա գինուորագրեն գինք գործօն մասնակցութեամբ.

Շար.ք էք 31

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԹԱԴԷՈՍ ԵՒ ՆՈՐԱ ՔԷՕՐՈՂԼԵԱՆ

Ս. ԾՆՈՒՆԴ

ԲԵԹՂԵՅԵՄԻ Ս. ԾՆՈՒՆԴՐ
(ՅՈՒՆՈՒՄ 19, ըստ հին տոմարի)
ՆԱՅԱՊԵՏ ՍԵԼՔՈՆԵԱՆ

Տարբեր է Բեթղեհէմի Ս. գիւղերուն՝ «մեր Ս. Ծնունդը»: Սակայն ի՞նչ կայ տարբեր... մանաւանդ երբ աշխարհ տօնած ու վերջացուցած կ'ըլլայ արդէն Ս. Ծնունդը եւ Նոր Տարին: Յետոյ, չէ՞ որ նոյն Քրիստոսի Ս. Ծնունդը կը տօնակատարենք, նոյն շարականները ու աղօթքները կ'երգենք, նոյն ջրօրհնէքի արարողութիւնը կը կատարենք ամենուրեք:

Այո՛, տարբեր, տարբեր համ մը ունի «մեր» Ս. Ծնունդի տօնը, հոգեւորոգ ու հոգեւոր քաղցրութեամբ մը լեցուն, տարբեր մուս բոլոր Ծնունդներէն:

Ընկալեալ սոցիոլոգիան է, որ Յունուար 18ի առաւօտուն, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց վարժարանի ամբողջ աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, յատուկ պատերով մեկնին Բեթղեհէմ, դիմաւորելու համար Ս. Յակոբայ Միաբանութիւնն ու Պատրիարքը՝ ապա մասնակից դառնան Ս. Ծնունդեան արարողութիւններուն:

Ուսումնական տարեշրջանի կիսամեայ «ճանր» քննութիւններէն ետք, աշակերտութեան համար բեթղեհէմեան արարողութիւնները, ապա վանքի տանիքի հաճելի ու յիշատակելի պահերը ու մանաւանդ դէպի Հովուաց Դաշտ այցելութիւնը, հոգեկան մեծ բաւարարութիւն կու տային այն օրերուն, յատկապէս տեղատարափ անձրեւներէն ետք, երբ կապուտ երկինքը կը ժպտէր ուխտաւոր դարձած աշակերտութեան եւ ժողովուրդին:

Վարժարանի տեսուչ՝ Տ. Կիւրեղ Վրդ.ի հրահանգով տղոց երգեցիկ խումբը ոչ միայն պարտաւոր էր շապիկ հագնել ժառանգաւոր սաներուն հետ, այլ հարկ էր որ Բեթղեհէմ գիշերէր միաբանութեան հետ, կէս գիշերին Ս. Ծնունդեան Այրին մէջ փառաւորեալ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը, «Փառք ի Բարձունս» եւ Ծնունդեան հոգեգմայլ շարականները երգելով: Խոստապահանջ էր հայր Կիւրեղ: Եկեղեցիէն փախուտ տուողին վարքը՝ այդ ամիս կը հաւասարէր զերոյի:

Մենք անհամբեր կը սպասէինք բեթղեհէմեան այդ հոգեթով օրուան:

Յունուար 18ի առաւօտուն, մինչ Ս. Յակոբայ վանքի զանգերը կ'աւետէին Ս. Ծնունդեան եւ Աստուածայայտութեան տօնը, աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, Երուսաղէմի Դաւթի դուռէն պատերով կը մեկնէին Բեթղեհէմ:

Վախտնական թուականներուն, երբ Յորդանանի Հաշիմական Թագաւորութիւնը կ'իշխէր Ս. Քաղաքին վրայ, յատուկ արտօնութեամբ միայն, Եաֆայէն, Հայֆայէն ու Նազարէթէն հայ ուխտաւորներ կու գային, որոնք Բեթղեհէմի Ս. Ծնունդեան տաճարին մէջ երկիւղածութեամբ մասնակից կ'ըլլային երկօրեայ տօնակատարութեան, ապա տուն կը մեկնէին:

Երուսաղէմի Հայոց դարաւոր հաստատութիւնը, որ Ս. Յակոբայ տօնէն ետք, շքեղօրէն կը զգենու յատուկ տօնական երեւոյթ, յատկապէս Դաւթի Մարգարէին եւ Ս. Յակոբայ Տեսնեղբոր, Ս. Ստեփանոսի եւ մանաւանդ Որդիք Որոտման տօներուն առթիւ, առաւել արտակարգ երեւոյթ մը կը զգենու Սուրբ Ծնունդեան տօնին առիթով:

Վանքին դրան առջեւ, տասնեակներով ինքնաշարժեր շարուած, եռուզեր մը կը ստեղծեն: Բոլորը կը սպասեն հայոց միաբանութիւնն ու հաւատացեալ ժողովուրդը ուղեւորելու Բեթղեհէմ: Ըստ սոցիոլոգիան, առաւօտեան ժամը 9:30ին Պատրիարք հայրը, վանքի աւագ թարգման եւ զաւագանակիր վարդապետներու եւ բարապաններու (ղաւաս) առաջորդութեամբ, իջնալով Պատրիարքարանէն, միաբանութեան եւ ժողովուրդին հետ միասին, ինքնաշարժերու երկար թափօրով մը կ'ուղեւորուի Բեթղեհէմ:

Ճամբան, Բեթղեհէմ քաղաքի մօտ, հայոց միաբանութիւնը կանգ կ'առնէ Յունաց Մար Իլիաս (Ս. Եղիա) վանքին առջեւ, ուր կը հիւրասիրուի վանքի վարդապետներուն կողմէ եւ ուր Պատրիարք Հայրը դիմաւորելու եկած կ'ըլլան Բեթղեհէմի եւ շրջակայ գիւղաքաղաքներու՝ Պէյթ ձէլէի եւ Պէյթ Սահուրի քաղաքապետերը:

Քաղաքավարական այս հիւրասիրութեանէն ետք, ինքնաշարժերու երկար թափօրը կը շարունակէ իր ճամբան դէպի Բեթղեհէմ, առաջնորդութեամբ հինգ ձիաւոր դրօշակակիր ոստիկաններու, որոնք որպէս պատու պահակներ, տարբեր վեհութիւն մը տալով թափօրին, կը շրջապատեն հայոց Պատրիարքին ինքնաշարժը ու կ'առաջնորդեն դէպի Բեթղեհէմի Ս. Ծնունդեան հրապարակ: Այստեղ՝ հրապարակին երկու կողմերը շարուած կ'ըլլան վանքի ժառանգաւոր սաները, Թարգմանչաց վարժարանի երկուսեւ աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը, որոնք անհամբեր կը սպասեն միաբանութեան ժամանումին, սկսելու համար տօնակատարում Ս. Ծնունդեան:

Մինչ՝ Բեթղեհէմ քաղաքի մուտքին, հայ արիւնք եւ օտար սկառուական խումբեր նուազով ու սկառուական տողանցքով, կը դիմաւորեն հայոց միաբանութիւնը, Բեթղեհէմի հայոց վանքի զանգակները կ'աւետեն հայոց Ս. Ծնունդի տօնակատարումը, Դաւթի այս հին քաղաքին մէջ:

Ձանգակներու ղողանջին հետ, յանկարծ կը հնչէ, «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» Սուրբ Ծնունդեան շարականը, ժառանգաւոր սաներու ու հայոց միաբանութեան կողմէ, որոնք երգելով կ'անցնին Թարգմանչաց վարժարանի աշակերտներու եւ հաւատացեալ ժողովուրդին մէջէն:

Հայոց Պատրիարքը, շրջապատուած Բեթղեհէմ քաղաքի եւ շրջակայքի պետական եւ գիւղատրական կառավարիչներով, ինչպէս նաեւ հայ համայնքի ազգայիններով, թափօրին հետ կը բարձրանայ Հայոց Վանք, ապա կարճ աղօթքէ մը ետք, վանքի տեսչարանին մէջ կ'ընդունի պետական եւ ազգային հիւրերու բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները հայոց Ս. Ծնունդի տօնին առիթով:

Կէսօրուայ դադարէն ետք, ժամը 2:30ին, հայոց զանգակները կրկին կը ղողանջեն, ու այս անգամ Պատրիարք Ս. Հայրը, իր գլուխ միաբանութեան, «Հրաշափառով» հանդիսաւոր մուտք կը գործէ Դ. դարուն Հռոմէական պաղիլիք ոճով կառուցուած Ս. Ծնունդեան տաճարէն ներս, ու անցնելով եկեղեցոյ սիւնազարդ գաւիթէն, տաճարի հիւ-

սիսային թեւէն կ'իջնէ Ս. Այրը, ուր երկրպագութեամբ կը կատարէ իր ուխտի աղօթքը:

Ապա հայոց բաժնին մէջ, կը կատարուի երեկոյեան ժամերգութիւն, իսկ Ս. Այրին մէջ կը մատուցուի ձրագալոյցի Ս. Պատարագը:

Ծննդեան նախատօնակի արարողութենէն ետք, միաբանութիւնը թափօր կազմած եւ Ս. Ծննդեան շարականներ երգելով, կը բարձրանայ հայոց վանք: Այստեղ բակի կամարին տակ կ'ընթերցուի Ս. Ծննդեան աւետարանը ու կ'երգուի «Փառք ի բարձունս»ի հոգեգմայլ աղօթքը: Այսպիսով վերջ կը գտնէ, արարողութեան առաջին բաժինը:

Մինչ՝ ժողովուրդէն մաս մը կ'իջեւանին վանքի իրենց բարեկամներուն մօտ, ուրիշներ բուրդէ ծածկոցներու տակ... կը հանգչին եկեղեցոյ կամարներուն տակ, սպասելով գիշերային հոգեպարար արարողութեան: Երիտասարդ տղաք, վանքի մուտքի անցքի սենեակին մէջ, կրակարանի մը շուրջ հաւաքուած, Սուրբ Ծնունդը կը տօնեն երգով, նուագով ու կերուխոմով: Քիչ մը անդին, վանքի ներքնայարկի կամարներուն տակ, հսկայ կաթսաններու մէջ, վանքի խոհարարները իրենց օգնականներով կը պատրաստեն աւանդական խաշլամայի նախաճաշը, միաբանութեան եւ ամբողջ ժողովուրդին համար: Գիշերուայ ժամը տասին, վանքի զանգակները կրկին կը ղողանջեն:

Տաճարի Հայոց բաժնին մէջ, հաւատացեալներու հոծ բազմութիւն մը աղօթքով ու խոկումով կը հետեւի արարողութեան:

Ժամը 11:30ին, կը սկսի հոգեգրաւ այն պահը երբ միաբանու-

թիւնը թափօր կազմած Պատրիարք Հօր գլխաւորութեամբ կ'իջնէ Ս. Այր, կէս գիշերային արարողութեան, որ կը ձայնափռուի ուստի-ոկայանէն:

Այստեղ Պատրիարք Հայրը Ս. Այրի խորանին առջեւ կանգնած, կ'ընթեռնու Աւետարանը, ապա միաբանութիւն ու ժառանգաւոր կ'երգեն «Փառք ի բարձունս» եւ այլ Ծննդեան շարականներ: Ս. Ծննդեան Այրէն, Պատրիարք Հայրը նաեւ կու տայ իր պատգամը տարասփիւռ հայութեան: Ս. Այրի արարողութեան ներկայ կ'ըլլան նաեւ Երուսաղէմի, Բեթղեհէմի եւ այլ շրջաններու քաղաքապետեր, բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնք ընդհանրապէս տեղ կը գրաւեն Պատրիարք Հօր մօտ հարաւային աստիճաններուն առջեւ:

Միժամեայ այս արարողութենէն ետք, առաւօտեան ժամը 1:30ին, տաճարի հիւսիսային թեւի՝ հայոց բաժնին մէջ կը մատուցուի երկրորդ Ս. Պատարագը, մինչ Պատրիարք Հայրը անգամ մը եւս ընդունելէ ետք պետական մարդոց շնորհաւորանքները, կը վերադառնայ Երուսաղէմ:

Ս. Պատարագի աւարտին՝ լուսարարապետ սրբազանի նախագահահութեամբ կը կատարուի «Ջրօրհնէք»ի նոյնքան հոգեգրաւ արարողութիւնը, որուն անմիջապէս կը յաջորդէ երրորդ Ս. Պատարագի մատուցումը, Ս. Այրին մէջ:

Ս. Ծննդեան արարողութիւնները վերջ կը գտնեն առաւօտեան ժամը ճին: Մինչ՝ վանքի զանգակները կրկին կ'աւետեն Ս. Ծնունդի տօնակատարումը հայոց, միաբանութիւնը թափօր կազմած, «Խոր-

Շարք էջ 31

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՏՐԻԱՆ ՍԱՂՐԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

ՆՈՐ ՏԱՐԻ - ԳԱԼԴ ԲԱՐԻ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Արեգակ, լույսի ու ջերմութեան աղբիւր, իր ճառագայթների վրայ երկիր մոլորակը որպէս ծաղիկ բռնած ճախրում է տիեզերքում, նրա ծիածանափայլ սքանչանքը տանում աստղերին, նրա մոլորակներին, որ նրանց բնակիչները գմայլեն նրա անուշ տեսքով: Աստղերն են ժպտում նրանց երթին, լույս ցանում նրանց ճանապարհին: Հռովմի կեսարը՝ Յուլիոս հրամայել էր արեգակին մի ակնթարթ դադարեցնելու իր վազքը, աստղագետներին յանձնարարել այդ ակնթարթը կոչել արեգակնային նոր երթի սկիզբը՝ Նոր Տարի: Նրա առաջին օրը անուանել էր Յուլնարուի 1, ի պատիւ Հռովմի «Դարպասներ»ի աստուած Jenus-ի:

Նոր Տարի: Մարդը դրախտի անըջային հէքիաթը արարեց որ երազային կեանքի հեշտանքով ապրէր, հրեշտակներ ստեղծեց որ իր մանչերի անխոռով քունին հսկէին, Յարութեան հրաշափառ տեսիլք յղացաւ, որ իր հոգում կեանքի յաւերժ յարատեութեան շունչը պոռթկար: Տիեզերքից աստուածներ վար բերեց, որ լույսը վառ պահէին, բանաստեղծութեան կրակ տեղային իրենց հոգիներին, մայրացնէին դաշտերն իրենց, քաջութեան ոգի հոսէին իրենց սրտերին, բուքին, անձրեւին ու տապին ճամբաների հիւղակներում պատարկէին անցորդներին: Եւ մարդը «Նոր Տարի» արարեց, հազար խրախճանքներով նրա գալուստի ակնթարթն է սօնախմբում: Մարդը ցանկացաւ երջանականալ գալիքով, որ աշխարհում խաղաղութիւն լինէր, մի տարով էր աւելի կեանքի հեշտանքով հրավառուէր, մանչերն իրենց ուռճանային, դաշտերում ու այգիներում առատ բերք հասնէր, օճախում յանապագօրեայ հաց լինէր, գուարթութեան եւ բերկրանքի լոյս ցողար իրենց սրտերին, կայտառ ու առողջ լինէին:

Նոր Տարի: Արմէն հայրը արբեցած տիեզերքի ու երկիր մոլորակի բնութեան երեւոյթների հէքիաթային առեղծուածից, մարդացած աստուածներ ստեղծեց: Բագարանի, Բագրեւանդի, Աշտիշատի աւաններում նրանց նուիրուած մեհաններ պատեց, որտեղ սօնախմբեց իրենց արտերում հասունացած ցորեանի, աչգիներում ծիածանացած բերքի, որթատունկերից ժպտացող խաղողի հանդէսների խրախճանքը: Իրենց ստրկացնելու, իրենց հողին տիրելու էր եկել Բագրեւանդի թագաւոր, իրեն աստուած հռչակած Բելը: Նահապետ Յայկը, ինչպէս առասպելական Մասունի Դաւիթը, մենամարտի էր դուրս եկել նրա դէմ եւ խոցել հօր բազուկներով պրկած աղեղից թուած նետով, տարին էր եղել այդ 2492, Նոր Տարի, Նաւասարդ (Նաւա Սարադա): Աստուածներին նուիրուած բերքի երեխայիքի հանդէսներին սօնախմբել էին նաեւ իրենց Նահապետի յաղթանակը:

Նոր Տարի: Հայոց Արեգ ամիս, Օգոստոս 11, Նաւասարդ-Նոր Տարի: Համաշխարհական սօնախմբութիւններ էին եղել, արքան հայոց, իշխանները, ժողովուրդը մտել էին աստուածների մեհաններ, խուրձ-խուրձ ցորեանի հասկեր փռել նրանց արձանների առաջ: Մայրութեան, բնութեան յաւերժութեան դիցամայր Անահիտի բազմաթիւ ցուրտ էին մորթել կարմիր կրակ արիւնը շող տուել նրա դէմքին, ճակատներն իրենց օճել: Արեւի աստուած Միհրի բազմաթիւ առաջ զամբիւղներով խաղող, մրգեր փռել: Գնացել էին

Աշտիշատ, Վիշապաքաղ Վահագնի մեհան, նրա «Հացեաց Դրախտ»ի հացենու պուրակի աղբիւրից սրբազան ջուր ըմպելու:

Մեհանների հրապարակներում խաղեր էին կազմակերպել, Նաւասարդեան խաղեր, որ հազար-հազար տարիներ յետոյ էլ հայերը նոյն ամսոյն պիտի կատարէին, ափսոս սակայն ոչ Աշտիշատում, Բագրեւանդում: Գողթան երգիչներն էին աստուածներին փառաբանում, բամբուկներ էին հնչում, թմբուկ զարկում: Մեհանների հրապարակներում շուրջ պար էին բռնում, ծիրանի արքան էր շարքի առաջ, կարմիր թաշկինակը շարժելով կրակ էր ցանում ժողովուրդի վրայ: Մեհաններ եզերած նուներնիների պայթած նուները որպէս ջահեր բռնած զարկում էին որմերին, ոսկեշաղ պարմանուհին էր վազում հրապարակ, կարծես Անահիտը լինէր, արքան նրա մատները ազուցած շուրջ պարով մեհանին էին ծնրադրում:

Մեհանների շքամուտքերի առաջ թատերախաղեր էին, իրենց Նահապետի մենամարտը Բագրեւանդի Բելի դէմ: Որոտում էր հրապարակը, վահանների հպուծի որոտի արձագանգը հասնում էր Բագրեւանդ, թրերի զարկերի կայծերը մեհանների պատերին ոսկի էին փռում: Ջահեր էին վառում, լույսի հեղեղից Վահագն էր յառնում, ձիւնափայլ Աստղիկն էր դուրս վազում մեհանից աւետելու նրա ծնունդը, քուրմն էր յաւերժ պիրոյ նարօտ կապում նրանց ճակատներին: Խոցուած Արա Գեղեցիկ, Ծամիրամն էր ողբում նրա վրայ հակած: Կանչում էին յարալէզներին, որ շունչ փչէին արքային, կենդանաւում էր Արան, Նուարդն էր վազում գրկում ամուսնուն, հրճուածից թնդում էր հրապարակը: Ազնուագարմ Արտաշէսն էր նժոյգի վրայ, պարան էր նետում, որ Սաթենիկին մեհան բերէր: Երգում էին՝

«Ո տայր ինձ գծուխն ծիրանի եւ գառաւօտն Նաւասարդի»:

Արիացի արմէնների Նաւասարդը ջրերի դիցուհուն՝ Ծովինարի պաշտամունք էր եղել նաեւ: Ջրախաղեր էին Նաւասարդում: Արքան, թագուհին, իշխանները, փափկասուն տիկնայք, պարման-պարմանուհիներ նետուել էին ջրախաղերի, ջուրն էր փտակ, փտակ հոսել նրանց վարսերից, իրաններից, պարմաններն էին ճախրել ըմպելու այն: Ով հայ տղայ, քու նոր տարուայ գիշերին անէացիր մի պահ, զնա քու հին աստուածների մեհաններին, երկրպագիր դիցամայր Անահիտին, քաջութեան հուր քաղիր Վահագնի արեգակունք ակներից, գրկիր քու ծիրանափայլ արքաներին, մտիր շուրջ պարի շարքեր, մտիր ջրախաղեր, դու էլ ըմպիր պարմանուհիների իրաններից հոսած կենաց ջուրը, տես քու սիրտդ ինչքան պիտի հրավառուի հայկեան բոսոր սիրով:

Նոր Տարի: Հին տարուայ վերջին օրը, ոտքի էր իմ հայրենի Եօղունօլուգ գիւղը, նրա մայր ճանապարհի հրապարակում խաղոյկ էր բոցավառում, իրենց նախնիների կրակի պաշտամունք էին բերել Մուսա Լեռ: Խարոյկի բոցերի կարմիր սիւները բարձրանում էին արեւին ջերմացնելու: Նոր տարուայ սօնախմբութիւն էր, մանչեր, պարմաններ իրենց պարտէզներից բերած դափնու կանաչ ճիւղերը որպէս սօնական դրօշ վեր պարզած գալիս էին հրապարակ, նետում այն խա-

ղոյկի բոցերին, ճարճատում, պայթում էին սեւ պտուղները, կայծեր թռչում վերեւ, Վահագն Համաստեղութեան Յարդագողի ճանապարհին աստղեր վառելու: Առաջին արեւագալին, Սուրբ Աստուածածին եկեղեցու կոչնակն էր զարկում, գնում էին աղօթելու, որ առատ բերք հասնէր իրենց պարտէզներում, դաշտերում քուն մտած կանաչած ցորեանին անձրեւ մաղէր, Աստուծոյ օրհնանք հոսէր իրենց շէներին, իրենց մանչերին: Նաւասարդեան խաղերի յուշը չէր մարել իրենց հոգիներում, գիւղի հրապարակում էին այրերը, «Տամա», Մուսա Լեռան ճատրակ, խաղերի մրցամարտեր էին: Երբ գինուրը արքայ էր դառնում, բացական թիւններից թնդում էր գիւղը, անդնդախոր ձորն էր անագնացած արձագանգում:

Ես հիմա Մուսա Լեռցի ալեհեր այր, մանչ դարձած նոյն հրապարակում եմ, ես էլ եմ բացականում հօրքեռայրից յաղթական կանչի հետ: Ուր են հասել հայ փշուրները, եթէ Աստուած բարի է, ինչու այսքան տառապանքի, կարօտի ցաւ Հայ Լեռնաշխարհում իրեն իսկ արարած դրախտի առաջին բնակիչների անմիջական յետնորդներին, նա երբ այնտեղ հաշտութեան ծիածան պիտի փռի:

Նոր Տարի: Հայոց մայր ոստան Երեւան, յորդում էր հայերի խուռներամ հոսքով, դուրս էին նետուել խանութներ, շուկաներ: Տեսել էք արդեօք հայոց շուկաները, յիշում էք այդ շուկաները: Դրսում ցուրտ, արեւն էր մրսում, իսկ ներսում նրա լոյսով արբեցած, նրա կրակը քաղած, ուսնչպարի քրտինքով ցօղուած, Սեւանի կապոյտ ջրերը ըմպած հողի բարիքներն էին: Հայ շինականի մայրացած ծառերի բարն էր բուրգացել սեղանների վրայ,

նրանց յենակներին չորացրած մրգերի շարաններ, ընկոյզի կոյտեր, կարմիր ժպտացող տանձ ու խնձոր, կախաններին սաթեայ, արեւի կարմիրը հագած, Աստղիկի լուսափայլ ոտքերից հոսած վարդ արեամբ օծուած արեւահամ խաղողի ողկոյզներ: Արեւն էր հազար գոյների ծիածանով իջել շուկաների սրահներ:

Ոստանի հրապարակներում Դիլիջանի անտառների եղեւնիների կանաչ ճիւղերի կոյտեր էին, իրենց տներ էին տանում, որ կանաչով լցուէին, պճնէին նրանց նորահարսների նման: Իրենց անտառների թռչուններ, զագանիկներ պիտի հանգչէին նրանց թեւիկներից, լսմպիկներ պիտի վառուէին որպէս իրենց նախնիների հոգիներից ժպտացող աչուկներ: Իրենցից շատ հեռու գերմանների աւանդութիւնն էր հասել իրենց երկիր:

Արարիչի վառած կանթեղը իր վերջին շողերն էր փռում, սակայն, մայր ոստանը վառուած էր... լույսի հեղեղով, շէքները կարմիր շապիկեր էին հագել, մերկացած ծառերը լույսի հրդեհներով էին բռնկել, հրապարակներում լույսի կանթեղների հրավառութիւն էր: Ոստանի լույսի հրավառութիւնից հեռու աստղերի աչուկներն էին մարել: Ոստան էր իջել Վահագն Համաստեղութիւնը, հեթանոս աստուածների նաւասարդեան լույսի կարմիր բոցերի տարափ, լույսի տաճար էր մայր ոստանը: Վարդալույս քարերով պատած նախարարների տան հրապարակում սօնածառ, Բագրեւանդի աշտարակից բարձր էր այն, լույսի գօտիներ էին կապել մէջքին, շուրջ բոլորը հէքիաթային կրպակներ: Տաներերեք օրեր վառում էր այն, ջուրից պոռթկացող երգերի հնչիւնների

Շաք. ը էջ 31

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



SAHARA RESTAURANT KRİKORIAN BROTHERS

ԱՄԱՆՈՐ

ԻՆՉՈՒՒ ԿԸ ՍԻՐԵՍ ԶԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՆ (Բ) ԱՄԱՆՈՐԵԱՆ ՆՈՒԷՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՄ ԶԱՅԿ ՆԱԳԱՇԵԱՆ

Տարիներ առաջ գրեր էի այս նիւթին մասին վերոյիշեալ խորագրով, որ իր ժամանակին հրատարակուեցան Սփիւռքահայ մամուլին մէջ, նոյնիսկ անգլերէնի թարգմանուելով: Այսօր կրկին կը գրեմ նոյն վերնագրին վրայ Բ. գիրը աւելցնելով, որովհետեւ, տարիներ յետոյ նոյն համոզումը ունիմ, գղջացած չեմ, ազգայնամոլական ծայրայեղութիւն չեմ տեսներ տեսակէտիս մէջ, ճիշդ եւ իրապաշտական կը նկատեմ համոզումս: Եթէ կան լեզուագէտներ որոնք փաստացիօքն հերքելով զանոնք կրնան տարհամոզել զիս՝ ուրախ կ'ըլլամ սորվելու: Այլապէս, կը մնամ նոյն «անուղղայ» սիրահարը մեր լեզուին: Որովհետեւ, հաստատ կը մնամ այն համոզումին վրայ, որ մեր լեզուն ունի բառեր ու հասկացողութիւններ, որոնք հայերէնին միայն չատուկ են:

Անոնց գլխաւորը ԿԱՐՕՏ բառն է, որուն հոմանիշը կամ նմանը չկայ որեւէ լեզուի մէջ: Շատ գրուած է կարօտին մասին, որ բառ մը չէ միայն, այլ լայն հասկացողութիւն մը՝ հոգեկան վիճակ մը, որ կը պարունակէ սէր, կիրք, իղձ՝ բոլոր սիրուած էակներու, առարկաներու եւ երեւոյթներու հանդէպ: Կարօտ՝ սիրելին հետ ըլլալու, սիրուած ընկերներու հետ ապրելու, հաճելի երաժշտութիւն մը ունկնդրելու, աղուոր գիրք մը կարդալու, գեղեցիկ տեսարաններ դիտելու, լեռնային գուլար օդը ծծելու, ծովեզրերի գաղջ աւազին վրայ յղիմանալու, անտառն ու վայրի կենդանիները տեսնելու, խարոյկի մը շուրջ բաժակ մը ըմպելով խորովածը ըմբռնելու եւ վերջապէս, ընելու բաներ, որոնք անկրկնելի անցեալին կը պատկանին: Այս ամէնը անվերադարձ երիտասարդութեան կարօտին կը վերաբերին: Եթէ կայ նման բառ մը որեւէ լեզուի մէջ, խնդրեմ, գիտցուցէք ինձի, որպէսզի, այսքան մոլեռանդ չըլլամ հայերէն լեզուին հանդէպ սիրոյս մէջ: Որեւէ այլ լեզուի մէջ կա՞յ բառ մը, որ այդքան բազմաբնու հոգեկան վիճակ եւ ապրում իւրացնէ:

Անցնինք ուրիշ բառերու, կենցաղային բառաւորներէ, ուր մեր ունեցած միակտուր բառերը գոյութիւն չունին այլ լեզուներու մէջ: Օրինակ՝ կեսուրը, գոբանջը, կեարայրը, աները, աներձագը, քենին, քենեկալը, տալը, տագրը

եւայլն, որոնք մէկ բառով գոյութիւն չունին ուրիշ լեզուներու մէջ: Այլ լեզուներու մէջ անոնք կ'արտայայտուին բառակապակցութեամբ, քանի մը բառ քովէ քով բերելով: Օրինակ՝ Մատըր ին Լօ, Ֆատըր ին Լօ, Պրատըր ու սիսթըր ին Լօ, կամ, Պել մեր, պօ փեր, պել սէօր, կամ պօ ֆրեր եւայլն, որոնք մէկ բառի փոխարէն բառակապակցութեամբ կ'արտայայտուին եւ յատկութեան պակաս ունին: Օրինակի համար երբ մատըր ին Լօ կ'ըսենք, հարսի՞ն թէ փեսային մօր մասին է խօսքը:

Շարունակելէ առաջ մեր լեզուին մասին այս ներբողը, պէտք է ընդունինք նաեւ որ մեր լեզուն եւրոպական լեզուներէն ետ կը մնայ թեքնոլոճիական բառաւորներով: Կը տեսնուի արդէն որ այս միտքս արտայայտելու համար իսկ օտար բառ մը գործածել ստիպուեցայ: Որովհետեւ, մենք չունինք թեքնոլոճի, ոչ ստեղծեցինք գայն եւ ոչ ալ մտանք այդ գիտական աշխարհէն ներս: Բայց ասիկա լեզուին թերթութիւնը չէ: Մեր հայրենիքն ալ եթէ մտած ըլլար թեքնոլոճիական աշխարհէն ներս, մեր լեզուագէտները, կամ լեզուագիտական կաճառը այդ մարզին յատուկ բառերը ստեղծած պիտի ըլլային:

Սոյն խոստովանութենէն յետոյ շարունակենք մեր լեզուին ներբողը:

Կարօտին պէս բացառիկ բառ մըն ալ համբոյրն է: Անգուզական, իմաստալից եւ արարքին պէս համեղ բառ մը՝ որ կազմուած է համ եւ բոյր բառերէն: Որեւէ այլ լեզուի մէջ կա՞յ կրկնօրինակը համբոյր բառին: Անգլերէն քիսը, ֆրանսերէն պեզէն, կամ իտալերէն պաչօն (որմէ ունինք պաչիկ ժողովրդական բառը համբոյրին տեղը չեն կրնար բռնել: Ասոնք բառեր են առանց համբոյրին ապրումին եւ պատճառած հաճոյքին հետ կապ ունենալու: Այդ բառերով կրնային կոչուիլ շատ ուրիշ բաներ՝ քար, ծառ ու ծաղիկ, ջուր եւ օդ, եւայլն, եւայլն, առանց առընչութիւն ունենալու համբոյրին հոլթեան հետ: Բայց հայերէն համբոյր բառը միայն համբոյրին կը վերաբերի: Որովհետեւ, միայն համբոյրն է որ համ եւ բոյր ունի եւ մաիցն հայերէնն է որ համբոյր ունի:

Կարօտին պէս անգուզական, անգոտանելի բառ մըն ալ համբոյրն է՝ հայ լեզուի բացառիկ գանձերէն մէկը:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հնդկաստանում հաւատում են, թէ ինչպէս որ անցնի առաջին օրը, այնպէս կը լինի ամբողջ տարին: Եւ մարդիկ մի առանձին խնամքով են նախապատրաստուում այդ օրուան: Ջարդարում են լուսամուտներն ու դռները, իսկ շէնքին ծաղիկեր են նկարում՝ ի նշան հիւրասիրութեան:

Այդ օրը հարկաւոր է լինել քաղաքավարի, արգելուում է անվայել խօսքեր ասել: Ճապոնացիների մօտ հնուց ընդունուած է, նոր Նոր տարուայ կէսգիշերին քաղաքների ու գիւղերի եկեղեցիների զանգերը 108 անգամ հարուածեն: Ջանգի վերջին հարուածից յետոյ բոլորը քնում են, որպէսզի լուսաբացին արթնա-

նան ու Նոր տարին դիմաւորեն նոր ծագող արեւի առաջին շողերի հետ: Նրանք ովքեր չեն կարողանում արթնանալ, Նոր տարին նրանց համար յաջողած չի լինի:

Իտալացիները Նոր տարուայ գիշերը իրենց տնից դուրս են նետում հնացած իրերը, նորը ձեռք բերելու նպատակով: Սա, փաստորէն նշանակում է հինը՝ նորի, վատը՝ լաւի փոխել:

Պարսիկները Նոր տարին դիմաւորում են գարնան գալուստի հետ՝ Մարտի 21ի գիշերը: Տօնակատարութիւնը տեւում է 13 օր: Տօնակատար սեղանին եօթ տեսակի ուտելիք են դնում, որոնց անունները անպայման պէտք է «Ս» տառով սկսուեն:

ՇՆՈՐՅԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԼԻԼԻԹ ՔԷՅՅԵԱՆ

Թերեւս չկայ մէկ ուրիշ աւելի համամարդկային ցանկութիւն-ողջագուրանք, քան այս մի քանի բառի պարունակածը, թէպէտ մարդկութիւնը բաղկացած է հարիւրաւոր ազգերից ու ժողովրդներից, հարիւրաւոր լեզուներից: Եւ բոլոր այդ լեզուներով ոչ թէ անցնողին, այլ եկողին է գերապատուութիւն տրուում՝ թէ անհատ մարդու եւ թէ մարդկային հաւաքականութեան էլ աւելի բարօրութեան, երջանկութեան ակնկալումով:

Պատմութեան հենց առհաւական ժամանակներից, ոչ միայն բնական, այլեւ բանական գուգորդութեամբ, թէ կրօնական հաւատալիքների, եւ թէ աշխարհիկ կեանքի փորձով, բոլոր այդ լեզուներով մաղթանքների մէջ առաջինը որպէս աւետիս եղել է խաղաղութիւնը՝ մարդու բարօրութեան, երջանկութեան նախապայմանը:

Այսօր, շնորհաւորելով եւ բարին մաղթելով միմեանց, անհատ մարդիկ, ընտանիքներ եւ ամբողջ ժողովուրդներ կեանքի եւ լոյսի յարատեւութեան կենսական իղձով խաղաղութիւն են հոլովում, որովհետեւ աշխարհը երբեք այսքան վտանգուած չի եղել, ինչպէս այժմ, ժամանակների ընդերքում մեզ այնքան անսահմանօրէն վիթխարի թուացող հողագունդը երբեք այնպէս փոքր, հետեւաբար եւ դիւրաւ խոցելի չի եղել, ինչպէս միջո՞ւկային գէնքի ամէնակործա ուժի այս դարում:

Մարդու պատմութիւնը, նրա ստեղծած քաղաքակրթութեան

պատմութիւնը, շարունակ եղել է Չարի ու Բարու հակամարտութեան պատմութիւն, եղել է Բարու հաստատման, հետեւաբար նաեւ՝ առաջադիմութեան պատմութիւն:

Այն մեզանից շատ ու շատ առաջ ստեղծել են մեր փառաւոր նախնիները: Պատմութիւնը ստեղծում ենք նաեւ մենք՝ ծնուած պահից մինչեւ մեր կեանքի վերջին վայրկեանը: Ստեղծում ենք, շարունակաբար մարելով այն պարտքը, որն ունենք մեզ ծնամ ժողովրդի եւ նրա մշակույթի նկատմամբ: Այսինքն, մշտնջենաւոր արժէքների նկատմամբ, որոնք մեր էութիւնը յագեցրել են այն բարոյականութեամբ, ինչը եւ անուանում ենք հայրենասիրութիւն, անուանում ենք, անմնացորդ նուիրում մեր սրբազան արմտաներին, որոնք ամէն մի հայի համար, աշխարհի որ ծայրում էլ նա հաստատուած լինի, գալիս են ազգային գոյութեան հազարամեակների խորք ունեցող ընդերքից:

Անցեալի այդ խոր հեռուներից սկսած համաշխարհային քաղաքակրթութեան ստեղծմանն ու զարգացմանը միշտ մասնակից, բայց անցեալ դարաշրջանում ամէնից աւելի անմեղ նահատակների տուած հայ ժողովուրդը իր գոյութեան իմաստն ու նպատակը պայմանաւորել է խաղաղութեան սրբազան գործին բերած իր նպաստով:

Ուրեմն, թող արեւշատ, լուսառուտ ու բարի լինի նոր՝ 2009 թուականը: Շնորհաւոր Նոր Տարի, Սուրբ Ծնունդ եւ խաղաղութիւն ընդ ձեզ:

ԱՅՆՊԵՍ ԱՐՄԵՆՈՒՅԻ	Կ՛ՈՒԶԵԻ ԲՈՅԱՄԵԱՆ
Այօսը հոգիս սաւառնում է Երազներիս կապոյտ երկնքում, Ու տանում է ինձ պատանելութեան վառ հեքիաթների աշխարհը սիրուն	Այդպէս անհամբեր, այդպէս սրտատրոփ:
Այնպէս կ'ուզեի որ մանկութիւնս Ետ գար նորից մէկ անգամ, Դառնայի անմեղ, մաքուր ու անբիծ	Այնպէս կ'ուզեի թէ կուզ մէկ անգամ Քունս չտաներ, տեսի նրան, Թէ ինչպէս լեցուն, լի տոպրակներով Իջնում է նա մեր ծխնելոյզից ցած:
Յրաշքներին հաւատացող Պարզ աչքերով երեխան:	Երբ աչքս բացւում ու քնաթաթայտ Դուրս նայեմ սառած պատուհանից ես, Տեսնեմ թէ ինչպէս իմ ընկերները Ժիր վազվզում են փափուկ ձիւներում:
Այդ ո՞ր մանուկն է կամ էլ պատանին Որ չի սպասում Նոր Տարուայ գալուն, Ով չի սպասում ծնեռ պապին	Երբ աչքս բացւում ու քնաթաթայտ Դուրս նայեմ սառած պատուհանից ես, Տեսնեմ թէ ինչպէս իմ ընկերները Ժիր վազվզում են փափուկ ձիւներում:
ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՐԵՐ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ	
Ո՞րքան սպասեմ ոտքերիդ ձայնին, Ո՞րքան սպասեմ քո հեւքին անդուլ, Ո՞րքան սպասեմ քայլերիդ փափուկ Ունախեւոքերդ շաղում են բուրմունք...	սրտերում...
Արի ու տես, տես որքան խռովք կայ, Ու կոտորուած սիրտ համայն աշխարհում, Ամոքիր նրանց սրտերը անկայ Ու շահտութեան սէր վառիր	Յարազատ մօր պէս արցունքներ սրբիր, Որբ ու անգօր յոյսերը վառիր Շատ կան աշխարհում որբ ու անտունի Քեզ են սպասում նրանց փայփայիր...

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ 10 ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցնող տարին լի էր մարզական իրադարձություններով: «Ձոյզ» տարիները որպես կանոն առեւտրի հազեցած են լինում սպորտի համար: «Ա1+»-ը, ամփոփելով տարին, առանձնացրել է Հայաստանի եւ համաշխարհային սպորտի տարուայ կարեւորագոյն 10 իրադարձությունները:

1. «Փեքին-2008»

Օգոստոսին Չինաստանի մայրաքաղաք Փեքինում կայացան ամառային օլիմպիական խաղերը: Ինչ-



պէս եւ սպասում էր խաղերը անցան չինացիների բացառապատասխանութեամբ: Չինաստանը ներկայացնող մարզիկները միանգամից 51 ոսկէ մետալի արժանացան: Ընդհանուր առմամբ՝ Չինաստանը 100 մետալ նուաճեց: 110 մետալի արժանացաւ ԱՄՆ-ն, սակայն ամերիկացիները ընդամենը 36 ոսկու արժանացան, ուստի գրաւեցին 2-րդ հորիզոնականը: Լաւագոյն երեւակը եզրափակեց Ռուսաստանը: Հայաստանը օլիմպիական ախոյեան չուներ: Փոխարէնը հայ մարզիկները ճարտար մետալի արժանացան եւ հանգրուանեցին 79-րդ տեղում:

2. «Եւրո-2008»

Եւրոպան յանձինս Սպանիայի ունեցաւ նոր ախոյեան: Սպանացիները յաջողութեան հասան Աւստրիայում եւ Շուեյցարիայում կայացած ֆուտպոլի Եւրոպայի առաջնութիւնում: Եզրափակիչում Լուիս Արագոնեսի սաները 1:0 հաշուով առաւելութեան հասան գերմանացիների նկատմամբ: Անակնկալ մատուցեցին Ռուսաստանի եւ Թուրքիայի հաւաքականները, որոնք հա-



ասան մինչեւ եզրափակիչ:

3. Հայաստան-Թուրքիա

Առաջին անգամ միմեանց հանդիպեցին ֆուտպոլի Հայաստանի եւ Թուրքիայի ազգային հաւաքականները: Խաղը տեղի ունեցաւ Սեպտեմբերի 6-ին Երեւանի «Հրազդան» մարզադաշտում: Մերոնք պարտուեցին 0:2 հաշուով: Իսկ մինչ այս նոյն մարզադաշտում Հայաստանի երիտասարդական հաւաքականը 2:1 հաշուով առաւել-



ութեան հասաւ Թուրքիայի երիտասարդական ընտրանու նկատմամբ:

4. Համաշխարհային օլիմպիադա

Գերմանիայի Դրեզդեն քաղաքում կայացած շախմատի համաշխարհային օլիմպիադայում կրկին յաջողութեան հասաւ Հայաստանի հաւաքականը: Հայ շախմատիստները նման յաջողութեան հասան 2-րդ անգամ անընդմէջ:

5. Անգլիական եզրափակիչ ֆուտպոլի ՌԻԵՖԱ-ի Ախոյեանների լիգայի 2007-08թթ. խաղարկութեան եզրափակիչում հանդիպեցին անգլիական 2 թիմեր՝ «Մանչեսթեր Եունայթեդը» եւ «Չելսին»: Մայիսին Մոսկուում կայացած եզրափակիչում յաջողութիւնը ուղեկցեց «Մանչեսթեր Եունայթեդին», որը յաղթեց



հետխաղեայ 11 մեթրանոցները աւելի դիպուկ իրացնելու շնորհիւ:

6. Արթուրը եւ Վախթանգը

Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկներ Արթուր Աբրահամը եւ Վախթանգ Դարչինեանը շարունակում են յաջող ելույթներ ունենալ աշխարհի տարբեր ռինգերում: Գերմանիան ներկայացնող Արթուր Աբրահամը միջին քաշային կարգում յաջողութեամբ պահպանեց ախոյեանական գոտիները եւ հերթական անգամ ճանաչուեց Գերմանիայի լաւագոյն բռնցքամարտիկ: Վախթանգ Դարչինը (Աւստրալիա) եւս յաջող մրցաշրջան անցկացրեց՝ միաւորներով ախոյեանական գոտիները: Այժմ Վախթանգը ախոյեան է IBF, WBC եւ WBA վարկածներով:

7. «Ոսկէ գնդակը» Ռոնալդին

Պորտուգալացի կիսապաշտպան Կրիշտիանու Ռոնալդոն ճանաչուեց Եւրոպայի 2008թ. լաւագոյն ֆուտպոլիստ՝ ստանալով «Ոսկէ գնդակը»: «Մանչեսթեր Եունայթեդը» կիսապաշտպանը հիւսնայի մրցաշրջան անցկացրեց եւ արժանիօրէն ճանաչուեց լաւագոյնը «հին աշխարհամասում»:

8. Ռուսաստանը աշխարհի ախոյեան

Հոկտեմբերի Ռուսաստանի հաւաքականը 15 տարուայ ընդմիջումից յետոյ դարձաւ աշխարհի ախոյեան: Քանադայում կայացած աշխարհի 72-րդ առաջնութիւնում ռուսերը

հեշտութեամբ հասան եզրափակիչ, որտեղ դժուարին պայքարում յաղթեցին կազմակերպիչներին՝ Քանադայի հաւաքականի հոկտեմբերին:

9. Մամակիցների քանակը աւելացաւ

ՌԻԵՖԱ-ն ընդունեց սենսացիոն որոշում. 2016 թուականից Եւրոպայի առաջնութիւններին 16-ի փոխարէն կը մասնակցեն 24 թիմեր:



Որոշումը ցնցեց ֆուտպոլային աշխարհին եւ դարձաւ քննարկուածների լուրջ թեմա: Ամէն դէպքում այն ձեռնտու է Հայաստանին, քանի որ



եզրափակիչ փուլ դուրս գալը այժմ աւելի հեշտ կը լինի, քանի գործող կանոնակարգով:

10. Ուժեղագոյնն ենք Եւրոպայում

Ծանրամարտի Հայաստանի հաւաքականը կրկին յաջողութեան հասաւ Եւրոպայի առաջնութիւնում: Իտալիայի Լուգանո քաղաքում կայացած 2008թ. Եւրոպայի առաջնութիւնում Հայաստանը 13 ոսկէ մետալի արժանացաւ, որոնցից 4-ը մեր ծանրորդները նուաճեցին երկամարտի արդիւնքում:

ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆԸ ՈՒԺԵՂԱԳՈՅՆՆ Ե ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

«Այս տարուայ ընթացքում Հայաստանի ներկայացուցիչները ծանրամարտում 63 մետալի են արժանացել միջազգային պաշտօնական առաջնութիւններում», - «Ա1+»-ի հետ գրոյցում ասաց Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի գլխաւոր քարտուղար Փաշիկ Ալավերդեանը:

Նախորդ տարիներին եւս Հայաստանը մեծ թուով մետալներ է ունեցել ծանրամարտում, սակայն այս տարի հայ ծանրորդները նոր ռեկորդ են սահմանել: «Նախորդ տարիներին ունեցել ենք 49-51 մեդալ, բայց այս տարի աննախագէտ շատ էին մետալները: Մեր ծանրորդները յաջող հանդէս եկան տարբեր տարիքային առաջնութիւններում: Բացի այդ այս տարի առաջին անգամ անցկացուեց ռուսանորդական համաշխարհային խաղեր, որոնցում եւս ունեցանք մեծ թուով մետալներ, իսկ նախորդ տարիներին այս առաջնութիւնը չէր անցկացուում», - ընդգծեց Ալավերդեանը:



Ընդհանրապէս ծանրամարտը Հայաստանում գործող մարզաձեւերից ամենաշատն է մետալ նուաճել 2008թ. եւ այդ ցուցանիշով մի քանի անգամ գերազանցում է միւսներին. «Եթէ նայենք Հայաստանում գործող բոլոր օլիմպիական մարզաձեւերով նուաճած մետալների քանակին, ապա կը տեսնենք, որ ընդհանուր մետալներից մօտ կէսը պատկանում են ծանրորդներին: Սա չափազանցութիւն թող չթուալ, ուղղակի այս տարի մեր ծանրորդները շատ յաջող մրցաշրջան անցկացրին»:

Ֆեդերացիայի գլխաւոր քարտուղարն ընդգծեց, որ մետալների



քանակը 1 կամ 2 տարուայ աշխատանքի արդիւնք է. «Մենք ունենք մարզիկներ, որոնք արդէն մեծ փորձ ունեն ծանրամարտում: Ունենք փորձառու մարզիչներ: Այս տարուայ արդիւնքները նրանց լաւ աշխատանքի արդիւնքն են: Ի հարկէ, աշխատանքները ճիշտ չկազմակերպելու դէպքում նման յաջողութիւնների չէինք հասնի: Ֆեդերացիայի նախագահ Սամուէլ Խաչատրեանի կազմակերպչական կարողութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ գրանցուած արդիւնքներում: Պէտք է նշեմ նաեւ, որ մարզիչների ընտրութիւնը լիովին



արդարացրեց իրեն»:

Որպէս տարուայ գլխաւոր իրադարձութիւն եւ լաւագոյն արդիւնք Փաշիկ Ալավերդեանը նշեց 2008թ. Փեքինում կայացած օլիմպիական խաղերում Հայաստանի ծանրամարտի հաւաքականի ելույթները. «3 պրոնզէ մետալ ունեցանք օլիմպիական խաղերում: Մեր ծանրորդները կարող էին եւ աւելի լաւ արդիւնքով վերադառնալ Փեքինից, բայց հոգեբանական որոշ արգելքներ չկարողացան յաղթահարել: Ամէն դէպքում 3 պրոնզէ մետալն էր աննախագէտ արդիւնք է Հայաստանի համար»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱԳՆԱՊԱԼԻ ՏԱՐԻՆ

2008 ՏԱՐԻՆ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏԱՐԻ

Շարունակում է 4-էն

կան նաև հանրագիտություններ տանող ճանապարհները:

Իշխանութիւններուն համար առաւել կարեւորութիւն ստացաւ Թուրք-Հայկական սահմանի բացումը, որ մասամբ պայմանաւորուած է նաեւ, իշխող կլանի տնտեսական շահերու պաշտպանութեամբ:

Ապտիլլա Կիլի Երեւան այցելութեան ընթացքին, Թուրքիոյ նախագահի վկայութեամբ, հայկական կողմը առաջարկած է, որպէսզի Թուրքիա ինք ստանան միջնորդի դերը՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ:

Այստեղ վտանգաւորը այն է, որ Թուրքիա շահաքրքիր կողմ է ի նպաստ Ատրպէյճանի եւ չի կրնար արդար միջնորդի դեր կատարել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ: Սահմանը բանալու դիմաց Թուրքիա միշտ ալ պայման դրած է Լեւոնային Ղարաբաղի վերադարձը Ատրպէյճանի իշխանութեան տակ: Որեւէ պատճառ չկայ ենթադրելու, որ Թուրքիա փոխած է իր այս պայմանը:

Հետեւաբար, Թուրքիոյ միջնորդութեամբ տեղի ունենալիք որեւէ բանակցութիւն չի կրնար Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը ապահովող որոշում գոյացնել:

Բանակցութիւնները Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներով կազմուած Մինսքի խումբի ծիրէն դուրս բերելով եւ ապաւինելով Թրքական միջնորդութեան վրայ, անձնատուութեան համազօր քայլ մը կրնայ դառնալ:

Այս պատճառով է որ վերջերս Լեւոն Տէր Պետրոսեան յայտարարեց ընդդիմադրութեան կողմէ շարունակուող մասսայական հանրահաւաքներու եւ ցոյցերու ժամանակաւոր դադրեցումը, որպէսզի իշխանութիւնները պատրուակ չունենան Ղարաբաղեան հարցի զծով զիջումներ կատարելու:

Յոյս կար, որ իշխանութիւնները իրենց կարգին, ընդդիմութեան առաջնորդի այս քայլին պատասխանեն դրական ձեւով եւ սկսին երկրէն ներս քաղաքական ճգնաժամը թուլացնելու քայլերու դիմել, առաջին հերթին ազատ արձակելով բոլոր քաղաքական բանտարկեալներն ու շինծու մեղադրանքներով բանտարկութեան դատապարտուածները:

Դժբախտաբար սակայն, իշխանութիւնները կը շարունակեն իրենց ազգավնաս ընթացքը, վտանգելով երկրի հեղինակութիւնն ու ժողովուրդի բարօրութիւնը: Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի հարցով քննիչները, Երեւան կատարած իրենց բազմաթիւ այցելութիւններու լոյսին տակ, վերջերս առաջարկեցին Հայաստանը գրկել ձայնի իրաւունքին, որ տարացիորէն կը նշանակէ առկա ինք մասնակցութիւնը այդ եւրոպական կարեւոր կառույցին:

Այժմ, միջազգային տնտեսական տագնապը սկսած է բախել Հայաստանի դուռը: Սպասուող դժուարութիւնները դիմակայելու համար կարեւոր է ոչ միայն երկրի ներքին կայունութիւնը, այլ նաեւ՝ արտաքին վարկերն ու օժանդակութիւնները: Միջազգային կառույցներու կողմէ մեկուսացման սպառնալիքին տակ գտնուելով, վտանգուած են նաեւ այդ օգնութիւնները:

Այն ինչ, որ քուէատուփերու եւ բողոքի ցոյցերու միջոցաւ կարելի չէր անցնող տարուայ ընթացքին իրականացնել, տնտեսական հսկայ տագնապի մը պարագային կրնայ պատահիլ ինքնաբերաբար: Սակայն մինչ այդ, բոլոր հետեւանքները կրողը դարձեալ պիտի ըլլայ Հայաստանի պարզ ժողովուրդը, որ աւելի քան տասնամեակէ մը ի վեր կը շարունակէ ապրիլ անորոշութեան մէջ: Իսկ նոր տարին եւս, այս առումով խոստմնալից չի թուիր ըլլալ:

«ՄԱՍԻՍ»

Շարունակում է 7-էն

փոքրիկ «քրիզ» մը ստեղծուեցաւ, իր իսկ նահանգի կառավարիչ Ռօտ Պլակօճեվիչի կողմէ, որ կը վերաբերէր իր իսկ նահանգի բաց թողած աթոռին համար նոր մը նշանակելու գործողութեան: Ըստ երեւոյթին, կառավարիչին եւ Օպամայի մարդոց, յատկապէս իր դիւանապետ Ռամ Էմմանուէլի միջեւ որոշ փոխանակութիւն տեղի ունեցած է այդ պարապ աթոռին անձի մը նշանակման կապակցութեամբ: Կառավարիչ Պլակօճեվիչ ազնկալած է որ այդ նշանակման հարցով ինք կրնայ որոշ վարձատրութեան մը, նիւթական կամ պաշտօնի իրեն կամ իր կնոջ, եւ երբ որեւէ խոստում չէր եղած Օպամայի խումբին կողմէ, ասոնց հասցէին ունեցած է կոպիտ արտայայտութիւններ, որոնք արձանագրուած ըլլալով, հասած են դաշնակցային դատախազին: Պաշտօնի չարաշահումի լանցանքով իլլինոյի կառավարիչը ներկայիս դատական հետապնդումի ենթարկուած է, մինչեւ զինք իր պաշտօնէն հեռացնելու վտանգով: Այս «քրիզ»էն բարեբախտաբար զերծ արձակուեցաւ Օպամա եւ իր շրջանակը, սակայն կրնար շատ աւելի լուրջ անդրա-

դարձ ունենալ եթէ որոշ «անփափկանկատութիւն» ըլլար կացութեան մէջ: Այս օրերուն, երբ Օպամա իր ընտանիքին հետ արձակուրդի է ծննդավայր Հաւայի, հոն եւս, «paparazzi» ճանչցուած ֆոթոնկարիչները Օպաման եւ իր ընտանիքը կարողացած էին նկարել ծովային լողանքի հագուստներով, այսինքն Օպաման մերկապարանոց: Այս մէկն ալ «անյարմար» գտնուեցաւ երկրի նախագահին համար: Թէ ինչպէ՞ս կարողացան այդ նկարիչները այդ նկարները ձեռք ձգել, եւ յաջողիլ այդ նկարներու ծախման գիները շահիլ, կը մնայ բաւակալին մտահոգիչ, եթէ միայն ապահովութեան նկատումներով...

Ըստ երեւոյթին նախագահ Օպաման պիտի ստանայ նաեւ «Pop Culture»-ի (ժողովրդային մշակույթ) ներկայացուցիչ ըլլալու պատիւը...

Վերջացնենք ըսելով որ բոլորովին նոր ժամանակաշրջանէ մը ներս կը մտնէ Ամերիկան, իր նոր նախագահով, եւ միեւնոյն ատեն աշխարհն ալ ստիպուած պիտի հետեւի նոր նախագահի իշխանութեան հոլովոյթին: Այսպէս է աշխարհի դրուածքը, տակաւին «եթէ Ամերիկա փոշտայ, աշխարհ հարբուխ կ'ունենայ»:

ՇՈՐՄԱՒՈՐԱՆԸ

Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Աննա Գիգիբեաններու առջինեկ մանչ գաւակ մը բախտաւորութեամբ ուրախ առիթով, զոր անուանած են՝ **ՆԱՐԵԿ ՅԱԲԷԹ ԳԻԶԻՐԵԱՆ**
Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեաններ կը շնորհաւորեն նորածինն ու անոր ծնողները եւ համայն ընտանեկան պարագաները: Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ

26 տարեկան երիտասարդուհի մը կը տառապի սրտա-երակային լուրջ հիւանդութեամբ: Սրտի երակներու փակմանը «valve» յատկապէս «միթրալ» փականի անբաւարարութիւնը լուրջ հիւանդութիւն պատճառած է: Նաեւ ենթական ունի ուղեղային երակներու անբաւարարութիւն:

Հիւանդը ենթարկուած է գործողութեան եւ կը կարօտի նիւթական օգնութեան:

Նիւթական ձեր օժանդակութիւնը մեծապէս պիտի նպաստէ հիւանդի դարմանումին:

Ձեր նուիրատուութիւնները հաճեցէք ուղարկել՝
Converse Bank corporation
AMERICAN EXPRESS BANK LTD, NEW YORK, USA
SWIFT: AEIB US 33
for credit Acc./737783
CONVERSE BANK CORP, YEREVAN, RA,
SWIFT: COVBAM22
In favour of LUSINE MOISYAN
a/c No or Doc. No 1930002305840101

INVITATION FOR BIDS (IFB)
NO. 1659
THE RESTORATION AND REPAIR
OF FOUR (4) FIRE DAMAGED
UNITS AT AVALON GARDENS
HOUSING DEVELOPMENT

The Housing Authority of the City of Los Angeles invites vendors to submit bids for the restoration and repair of four (4) fire damaged units located at 701 E. 88th St. Los Angeles, CA 90002. Copies of the IFB documents may be obtained beginning December 15, 2008 at the Authority's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057. Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (Pacific Time), January 26, 2009. To request an IFB call (213) 252-5405 or (213) 252-1832.

1/1/09
CNS-1489232#
MASSIS WEEKLY

REQUEST FOR PROPOSALS (RFP)
7512) ELECTRONIC DOCUMENT
MANAGEMENT SYSTEM

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing electronic document management system. Copy of the RFP may be obtained beginning December 22, 2008 via www.hacla.org website or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by February 5, 2009.

1/1/09
CNS-1492528#
MASSIS WEEKLY



ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՅԱԶՈՂՈՒԵՑ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԱՆՆԵՐԻՑ ՊՈԿԵԼ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Շարունակում է 5-էն

թիւն սկսելու վերաբերեալ: Յստակ է, որ թէ Օբաման եւ թէ Քլինթընը միշտ էլ կողմ են արտայայտուել Յեղասպանութեան ընդունմանը: Բայց մենք, դժբախտաբար, շատ աւելի ոգեւորուած ենք Յեղասպանութեան կամ Հայ դատի հարցում՝ սառը դատելու փոխարէն: Դա մեր նկարագրի ամենաթույլ կողմերից մէկն է: Այնքան ենք զոհի հոգեբանութիւնը գենետիկորէն արմատաւորել մեր մէջ, որ հարցին իրատեսակ մասն մտնեցման փոխարէն՝ զգացական մտնեցում ենք ցուցաբերում, ուրախանում որեւէ մէկի՝ ի նպաստ Յեղասպանութեան ճանաչմանը կատարուած յայտարարութեամբ, առանց հասկանալու, մինչեւ ո՞ր այն կը հասնի, որեւէ

լուծման կը հանգի, թէ՞ ոչ: Օբաման միշտ յայտարարել է, որ Յեղասպանութիւնն ընդունուելու է, սակայն եկէք հաշուի առնենք մի կարեւոր հանգամանք: ԱՄՆ-ում որեւէ քաղաքական գործիչ, այդ թուում եւ՝ Օբաման, Քլինթընը կամ անգամ որեւէ հայ, չի համարձակուելու վնաս հասցնել ամերիկեան պետական շահերին՝ ընդունելով Յեղասպանութիւնը: Դա յստակ է: Ու հարցին այլ դիտանկիւնից մօտենալը պատրանքներով առաջնորդուել կը նշանակի:

Մենք ունենք Սարգսեան-Գիւլ հանդիպման նախադէպ, ու վստահ ենք, որ ԱՄՆ-ն միակողմանի որեւէ որոշում մը չի ցանկանայ խանդարել սառցահալին: Սա լինելու է՝ անկախ մեր կամքից:

«ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net



MISSION

WINE & SPIRITS

*Merry Christmas &
Happy New Year*

Pasadena

**1801 E Washington Blvd.
Pasadena, CA 91104
626-797-0500**

Glendale

**825 W Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
818-242-0683**

